

W. J. Brewster

Thruwrgy

Aug 1943

2943





891.99

OL-A

50303

July 12, 1944, 10:45 AM

20d1

16.VII
23.VII6.VII
18.VII362
17114.VII
25.VII340
384

1	=	7
2	=	14
3	=	21
4	=	28
5	=	35
6	=	42
7	=	49
8	=	56
9		
10		

1	=	6
2	=	10
3	=	14
4	=	18
5	=	24
6	=	21
7	=	27
8	=	30
9	=	33
10	=	30
11	=	44
12	=	44
13	=	44
14	=	44
15	=	44
16	=	44
17	=	44
18	=	44
19	=	44
20	=	44
21	=	44
22	=	44
23	=	44
24	=	44
25	=	44
26	=	44
27	=	44
28	=	44
29	=	44
30	=	44
31	=	44
32	=	44
33	=	44
34	=	44
35	=	44
36	=	44
37	=	44
38	=	44
39	=	44
40	=	44
41	=	44
42	=	44
43	=	44
44	=	44
45	=	44
46	=	44
47	=	44
48	=	44
49	=	44
50	=	44
51	=	44
52	=	44
53	=	44
54	=	44
55	=	44
56	=	44
57	=	44
58	=	44
59	=	44
60	=	44
61	=	44
62	=	44
63	=	44
64	=	44
65	=	44
66	=	44
67	=	44
68	=	44
69	=	44
70	=	44
71	=	44
72	=	44
73	=	44
74	=	44
75	=	44
76	=	44
77	=	44
78	=	44
79	=	44
80	=	44
81	=	44
82	=	44
83	=	44
84	=	44
85	=	44
86	=	44
87	=	44
88	=	44
89	=	44
90	=	44
91	=	44
92	=	44
93	=	44
94	=	44
95	=	44
96	=	44
97	=	44
98	=	44
99	=	44
100	=	44



891.99

թ-70

Ակ. ԻՍԱՀԱԿՅԱՑՄԱՆ

Ապրիլ 1961 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

A 5513
1 5033

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԵՎԱՆ 1943

Աւագմբ և Յերնիսի սպիսը
Ճաղ. Եկարիչ Հ. ԿՈԶՈՅԱՆԻ

АВ. ИСААКЯН
ИЗБРАННЫЕ СТИХИ
(На армянском языке)
Армгиз—1943—Ереван

Ես երգիչ եմ—երկնի թեթև,
Ես զանձ չունիմ— լեռ ու բեռ.
Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,—
Ծաղիկ բուրմունք, կույսի սեր.
Ես սիրում եմ մրմունջ—տրտունջ.
Տանջված սրտի երդ ու վերք:



Գիշերն եկալ, զով-հովն ընկալ,
Աստղունք լուսնին ձայն տվին.
Լուսնյակն եկալ, մով-ծովն ընկալ,
Հավքերն ինձի ձայն տվին:

Ես վեր ելար ոգի առած՝
Զարկի սբախ լարեցին.
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց—
Եկ լարերը խզվեցին . . .

— Միայն սիրո լարը մնաց
Արտիս անհուն խորքերում.
Ու սուրբ սիրո երդը չողաց
Կյանքիս ամեն ծալքերում . . .

1895—Արգինա

— Սիրտըս երկինք է . . .
Ամենի արարած
Եսող ունի այնուեղ—
Գահ ունի այնուեղ:

— Սիրտըս երկինք է . . .
Բույր կուտա ծաղկին,
Սեր կուտա կույսին,
Կյանք կուտա անկյանք,
Չոր անապատին—
Ամայի սրտին . . .
— Սիրտըս երկինք է . . .

1893



Նրանք իմ կյանքը երազ դարձուցին—
Կուսական մաքուր աչելու անուել.
Յամաքած սիրտս նորից լացուցին,
Հոգիս վառեցին երգերով քնքուել,
Շուրջըս վուեցին աստղիկ ու ծաղիկ—
Կուսական մաքուր աչելու անուել . . .

1904



Հոգի կուտամ, հոգի տուր ինձ,
Իմ նազելի աչաղեղ:
Սիրտս—սե արտ, սերդ ալ-վարդ,
Թուղ բողբոջի նա այնուեղ.
Սիրտըս—դիշեր, սերդ— վառ աստղ,
Թուղ շողչողա նա այնուեղ . . .

1892

ԱՇԽԱ, ալ-վարդի, սիրո վարդի
Չո՛ր փշերը մնացին . . .

ին փշերը մատաղ սիրտը

Քրքրեցին ու կերա՞ն .

Կարմիր-կանանչ իմ օրերը

Սիրո սգով սևացան . . .

ԱՇԽԱ, ախսո՞ս իմ գարուն կյանքիս

Սո՛ր փշերը մընացին . . .

1897. Արքսանդրապոլ



Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր՝
Աչերիդ մեջ չող ցայեմ .
Լուռ դիշերիւա անուշ հովեր՝
Փունջ ծամերդ վայիայեմ :

Կուզե՞ս լինիմ վարդ-նաղելի՝
Կրծքիդ վրա վառվոխմ .
Արշալույսի չողեր ոսկե
Դեմքիդ վրա վայլիլիմ :

Կուզե՞ս լինիմ ծառ ու ծաղիկ՝
Քեզ գրկումս նինջ սիռեմ .
Թալուկ սամեր, թալիչ թռչնիկ,
Օրոր սանմ օրորեմ :

Ինչ որ ցանկա՞ կուզե՞ս լինիմ ,
Լինիմ երկինք ու երկիր ,
Լինիմ ծով, ժայռ, արե, լուսին ,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրեր . . .

1892—Հառիճ

Սիրտ իմ, սպասիր, գուցե արշալույս
Ողջունե երկինք, գուցե մանուշակ
Շաղ տա բյուրեղներ, գուցե մի նոր լույս
Հալածե մութը, գուցե հաղթանակ
Տանիս կովի մեջ—մի՛ հուսահատիլիր.
Ապրի՛ր մինչ կա կյանք, մինչ նորոգ հույսի
Կախարդ հորիզոն... Սիրտ իմ վշտակի՛ր,
Ինչո՞ւ ես հեծում, մի՞թե ամեհի
Օձն է ճնշում քեզ—կասկածը անհույս,
Զանձրույթը դաժան... մի՞թե խորտակվեց
Սերը սրբազն— երկինքը հոգուս...
— Տանջըլի՛ր, հուսա՛...

1891—Ալեքսանդրապոլ



— Պարզըկա դիշե՛ր...
Աստղերն երկնքում լուռ ոլսպղում են,
Ծողերը լուսնի դիպել են սարի
Զյունոտ կողերին—կողերը ցոլում,
Պեծին են տալիս:

Քամին ցրտաշունչ
Թեփերը փռած փնջում է, թռչում,
Երկիրը սառած՝ ճաքում—ճաքճքում,
Զյան հատիկներով կուրծքը քարափի
Ծեծում ու ծեծկում....

Անծայր հանապարհ...
Առաջ հմ գնում—ո՞ւր, —ես չը գիտեմ,
Սառույց ու ձմեռ.

Առաջ եմ գնում անհո՛յս, անընկե՛ր,
Քամի ու դիշե՛ր . . .
— Ա՛խ, եթե հանկարծ հույսը չողովար . . .
Եա ինձ ողջունե՛ր . . .

1892



Մի՞թե պիտի թոռմին, թոշնին
Վարու ու չուշան խնկաբույլ,
Անդորր լուն թոչունների
Վառ մեղեղին,
Ակն—աղբյուր:
Մի՞թե պիտի, չքնաղ ընկե՛ր,
Կյանքի անուշ հույզերից
Կուրծքդ հանչէի, —լուռ դադարիս
Սառն ու անկյանք
Շիրմի տակ . . .
Մի՞թե պիտի փոշի դառնան
Այդ աչերըդ կենսավառ,
Ուր չողում են հույս ու տենչեր—
Միրո աստղեր
Ինձ համար:
Մի՞թե պիտի վառ ժպիտը
Եվ արցունքիդ ծիածան
Ինչպես երաղ անդարձ մարին
Խոնավ հողում
Հալիտյան:
Օ, ի՞նչ, մի՞թե, մի՞թե, հոգյա՛կ,
Պիտի անհետ մռացվիս,
Զյունի շերտեր վըրադ դիզին,
Փոշիդ տանի
Ցուրտ քամին . . .

1893— Դադարապատ դյուդ

իուռ պարտիզում՝ սըլտատըրովի, սիրատենչ
իմ նազելուս սպասում եմ այս գիշեր.
... Շըշուկ ընկավ ահա վարդի, ծաղկանց
մեջ,
Ծըփծիացին շուրջս մետաքս դառ իիշեր.
Իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց,
Կարուտավառ համարտ կրծքին վարդեցի.
Ծովմաղերի բույրը անո՛ւշ՝ ծաղկալիեց,
Աստղաչերին համբույրներս վառեցի.
Շըթներիցը ալարյունը կաթկաթեց
Եվ բախտավոր, և երջանիկ լացեցի...
— Վար՛յ քեզ, թըշվառ, ցընորքների խեղճ
ոըդար,
Ոչ ո՛ք չունիս, ոչ ո՛ք չըկա՞ քեզ
մուս դա...
1905 - Ալեքսանդրապոլ



Եվ սերը սիրուս կարեկվեր խոցեց,
Վերքիս այս, քո՛ւյր իմ, զեղղարման չը կա.
Սիրուս արցունքով աշխարհ թաթախվեց
Բայց դո՛ւ մնացիր օտար, անըղղա...

Եվ ո՛ւր լինում եմ, քո սերն եմ երդում,
Սիրուս դեպի քեզ թոչում ե հավերժ.
Ուրիշն գըրկած՝ ես քեզ եմ զեռում,
Ուրիշի գրկում սըրայց քոնն եմ հովե՛րժ...

Եվ դու համբայան անհաս ասաղի ողէն
ինձնից հեռո՛ւ ես, ինձնից հեռո՛ւ ես...
1904 - Նոր Նախիջեան

Նման զայլերի խըմբին ամեհի,
Չըմբոն զիշերին ուսնում է քամբին;
Եվ իմ սպարտիզում—մռա՛յլ, ամա՛յլ,
Խեղճ ուսիներիս չարդում է քամբին:

Ա՛յս մանկուց լացեց քո սերը, սի՛րտ իմ,
Ոչ ո՛ք չհասկացավ երազդ աղվոր.
Զուր մի՛ սրոնիր սիրտ իմ մտերիմ,—
Յնովել է հոգին հավերժ մենավոր:

Հանի՛ր քո սերը սըրտիցըդ անհույս,
Այդ խորթ, աղօրեն զավակն աշխարհի,—
Զգի՛ր այս դաժա՞ն, մո՛ւթ զիշերին դուրս՝
Ցուրտ քամու րեզան... թո՛ղ երթա սասի...

Թո՛ղ լու հեծեծու սերըս՝ որը, անմա՛յլ,
Եվ քամին լացը նրա թո՛ղ տանի
Սլեկոծ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդու մոտ... երբեք չը տանի...

Ունում է քսմին, վայում զժընդակ
Մուայլ զիշերին ձյուն-ձմերոյնի.
Եվ սերը ջարզված ուսիների տակ
Մեռնում է մենակ.—թո՛ղ երթա՝ մեռնի...
1904—Այերսանդրասլու



Իմ հոգին տարագիր միւ թոչուն՝
Մըրբկավ զարնված, թելաթափ.
Հողմերն են հեղ զլիսիս շառչում,
Եվ ուղիս անհատնում և անափ:

Իու ըյսւրեղ բարձունքում մի երազ՝
Հուսազարդ, և քնքուշ, և գողարիլ,
Մի երազ սրբափայլ և անհաս,
Հառվիտյան հեռավոր մի ասաղիլ:

Ա՛խ, նայեր մի անդամ ինձ վլրա
Քո անդորր և քո խոր աչերով.
Հայացքիլ ծովի մեջ դեթ մի սլահ
Թող հանդչեմ սրտիս հուբաենչերով:

Իմ հովին վիրավոր մի թոչուն,
Չունի բույն, չունի քուն ու անդորր.
Հողմերն են հեգ դլիսիս շառաչում,
Եվ ուղիս սե ու մութ և մոլոր...
1905—Ալեքսանդրասլու



Քնքուշ հովիլ, իմ նազելուց
Քաղցր բարձունք հետըդ բե՛ր.
Վեշտս ու ցալս չո՛ւտ փարատի՛ր,
Միրո բարե հետըդ բե՛ր:
— Շո՛ւտ, մատովակ, ոսկի թասով,
Վարդի գույնով դինի բե՛ր:

Անուշ խոսքեր սիրուս սրտի
Պարտեզներից քաղի՛ր բե՛ր.
Զերմ համբույրի, ծովկարոտի
Ծաղիկ-ծաղկունք հետըդ բե՛ր:
Շո՛ւտ, մատովակ, ոսկի թասով.
Նոան փայլով դինի՛ բե՛ր...

Մութը գրկած զետ ու դեսին
Հով ու ալիք կը չհչին.
Երկինք գրկած աստղ ու լուսին,
Աբոերն անդուրը կը հնջեն:

Սիրաս, սիրաս թույլ կզարկե,
Սեր ու երդեր է՛լ չկան.
Նոր էր ծլել, արև սիրեց,
Արե-աչեր է՛լ չկան:

Վառ աստղերը երկնեց ընկան,
Վարդ ու շուշան թաւամեց.
Ա՛խ, իմ կյանքս, անուշ կյանքս,
Կառը-կտոր վշբվեց . . .

Հովին ու ալիք կուգան, կերթան,
Յաված սիրաս կշոյեն.
Ռւ իմ սիրուս մրմունջներից
Տիսուր երդեր կհյուսեն . . .

1895 - Դադարազատ



Օտա՞ր, տմայի՛ ճամբեքի վլրա
Իմ քարայտանըս մեզմ կը զողանջե.
Կանգնի՛ր, քարայտանս, ինձի կը թվա,
Թե հայրենիքնս ինձ մարդ կը կանչե:

Բայց լո՞ւս է շուրջըս ու ըլշուկ չըկա
Արեվա՛ռ, անդո՞րր այս անապատում
Ա՛խ, հայրենիքնս ինձ խորթ է հիմա,
Աւ քնքուշ սերըս ուրիշի գրկում:

Կընոյ համբույրին էլ չեմ հավատա,
Շուտ կը մոռանա նա վառ արցունքներ .
Շարժվի՛ր, քարավանս, ինձ ո՞վ ճայն կըտա,
Դիսցի՛ր, լուսնի տակ չըկա ուխտ և սեր:

Գընա՛, քարավանս, ինձ հետդ քա՛շ տուր
Օտար ամայի ճամբեքի վըրա .

Ուրաեղ կհոգնիս՝ գըլուխըս դիր վար—
Ժեռաքարերի մեջ, փըշերի վըրա . . .

1903—Հին-Նախիջևան



Ծաղիկ էի նորաբաղմոյ,
Սարի լանջում, երկնի տակ .
Ինձ կը դյութեր առվի խսխոյ,
Ինձ կողջուներ արեղակ :

Գիշերները՝ աստղ ու լուսին
Վար կիջնեին երկնքեն,
Որ հեքիաթներ ինձ ասեին
Կախարդական, ոսկեղեն :

Գառների հետ լուսածաղին
Եկար սարը, ջա՛ն աղջիկ,
Ինձ քաղեցիր, դրիր անգին
Կրծքիդ վրա դեղեցիկ :

Այնտեղ չքեղ՝ ես ապրեցա
Երազներով երջանիկ .
Սերդդ դավեց ինձ, սեղաչյա՛,—
Ես չորացա, ա՛խ, աղջիկ . . .
1892—Եջմիածին

Երազիս տեսա՝ օրո՞ր ու շորո՞ր
Քարվան էր անցնում զնդալով անո՞ւշ.
Սարերի փեշով ոլո՞ր ու մոլո՞ր
Քարվանն էր անցնում զնդալով անո՞ւշ:

Նազելիս տեսա ուրախ, շողջողուն,
Հարսի քողերով, ոսկի շորերով.
Ու ոտներն ընկա կարոտով վառման,
Ա՛խ, քարվանն անցավ սրտիս վրայով:

Ճամբու փոշու մեջ անտերունչ, անտեր,
Բնկած էի ես ջարդված ու անհույս.
Ու հեռուներից լսում էի զեռ
Անցնող քարվանի զողանջը անո՞ւշ...

1907



Ա՛խ, ես սիրու ճամբի ափում
Մենակ բուսած վայրի վարդ եմ.
Անց ու դարձի փոշին ծփուն
Վերաս իջած, կորած վարդ եմ:

Սիրունները պարտեղների
Քնքուշ պահած վարդն են սիրում,
Ես հուր-վարդն եմ ժեռ սարերի՝
Սերս հասած արևներում:

Անց ու դարձող ինձ չի նայում,
Իսկ ես սիրու ծով-ծարավ եմ.
Ծարավ սիրաս փշեր բուսցուց,
Հիմա չար եմ ու նախանձ եմ...

1901

15

Քո ունքելու, իմ սիրելան,
Կեռ են դահճի թրի նման:

Աշխարհը՝ սուստ երազ ու սի՞ն,
Թողլ որ խմեմ, իմ սիրելան,
Շրթունքներիդ կարմիր գինին, —
Գլուխս դարկ դահճի նման . . .

Քո ունքերդ, իմ սիրելան,
Կեռ են դահճի թրի նման;
1912—Իդմիթ



Ես հովիկ լինեի,
Դու՝ նազուկ ցարասի,
Գովեի կարոտով
Վարսերդ սնգուսի:

Ես եղնիկ լինեի,
Դու՝ աղբյուր պալաջուն.
Խմեհ համբույրդ
Շրթներով առչորուն:

Ես թիթեռ լինեի,
Դու՝ կարմիր բոց-կրազ,
Կիզվեի գրկիդ մեջ,
Մեռնեի ստքիդ տակ:

1918

Դրկեր ինձ մեղմիկ ,—
Քո կախարդ գըկում
Ես զգում եմ ինձ
Իմ հայրենիքում :

Ծիծաղում ես դու՝
Ուրսիս ու անմեղ,
Մեր դըռան , ասես ,
Ազբյուրն է բյուրեղ :

Շշնջո՞ւմ ես դու
Այսպե՞ս հեզ , անուշ ,
Ասես , մեր դաշտի
Հովիկն է քնքուշ :

Ու երբ խաղում ես
Իմ մաղերի հետ ,—
Վաս մանկությունս
Ինձ դառնում է ետ :
1918



Մի մայոն աղջիկ աեսա
Ուխալառյի կամուրջին ,
Հորդ մաղերը — դետ գիշերիւ ,
Եվ հակինթներ՝ ականջին :

Աչքերը սե — արևներ սե ,
Արևների պես անշեջ ,
Գալարում էր մեջքը թեթե
Ծաղկանկար շալի մեջ :

Աչքս դիպանլ աչքի բոցին,
Ու գլուխըս կախեցի.
Ժպտաց ժպտով առեղծովածի,
Հավերժական կահացի:

Միտմիտ չեմ՝ հավատամ քեզ.
Տառապանքս վորոձ ունի.—
Մի մրայոն կույս էր քեզ ողես,
Կուրեց սիրտս պատանի...
1925—Վենետիկ



Ասում են, թե՝ դու այնպես
Մոռացել ես ինձ այնպես,
Որ երբ անունս են տալիս,
Հաղիով միտքով եմ դալիս:

Բայց, նազելիիս, ձեր լակում
Այն լորին է դու ծաղկում,
Որի քնքուշ բույրի մեջ
Քեզ դրկեցի սիրատենչ:

Ու զրկես մեջ այսօք դեռ
Կիզող կրակ է վառվել,
Իսկ երբ անունդ են տալիս,
Միլտս արյուն է լալիս:

Ա՛խ իրավ է՝ դու այնպես՝
Մոռացել ես ինձ այնպես,
Որ երբ անունս են տալիս,
Հաղիով միտքով եմ դալիս...

1925—Վենետիկ

Վերջին հորձանք իմ ցնորդքեւ,
Դրոհ տվիր կյանքիս վերջին,
Զեռիդ անհուն բաժակ ոսկի՝
Արբեցումի հրով վերջին:

Մեր մազերդ օձախոխիլ
Խճճեցին ուղիս վերջին.
Անհաղ հսդիս լցվեց լրիով
Մահասարսուռ ոիրով վերջին:

Արյունս հիմի աչքս առած՝
Դեմք ևմ կանդնել դողով վերջին.
Սիրտս վուլած՝ սիրուդ առաջ,
Մահ խոցեցիր որով վերջին...
1927—Երևան



Թարթիչներդ չուք կոտան
Դեմքիդ վրա թափիշե.
Սիրտս չուքի տակ ահուչ
Ծվար մտած կերազե:

Թաթիկներդ լուսեղեն—
Լույս թռչնիկներ հեքիաթի—
Ճաճանչներով ոսկեղեն
Բույն կհյուսէի նոր բախտի:

Զմբուխսո թասով դինի ես,
Բույրդ աշխարհ է առել,
Շուրթս վառվեց շըթներիդ,
Աշխարհիս տերն եմ դառել:
1921—Վենետիկ

Ծաղկավառ ուղին գնում է կրկին .
Ուր լույս-թեղերով ճախրում էի և՝
Երազելով քեզ, հավերժական կին :

Ծաղկավառ ուղին գնում է կրկին ,
Եվ նրա ափին կանգնել եմ մոլոր
Եվ բեկված կյանքով, տիտղոսիրազին :

Ծաղկավառ ուղին գնում է կրկին ,
Եվ լույս-թեղերով ճախրում են նրանք
Երազելով քեզ, հավերժական կին ...

1929—Երևան



Տարիներ հետո քեզ տեսա նորից ,
Սիրտըս արտասլեց, բայց ժպտացի ևս,
Նույն աղջիկն էիր՝ չքնաղ բոլորից ,
Հողուս մտերիմ, հարազատ այնպես :

Աչքերդ մեղմով հանգչեցին վերաս ,
Ես հպարտ ու վես անցա քո մոտով .
Շուրջըս ծածանվեց լուսեղին երազ ,
Եվ ետ նայեցի անզուսալ կարոտով :

Սուտ է, նազելիս, չի զատել երմեք ,
Երբեք չի զատել մեզ կյանքը դաժան .
Քույր իմ, ամոքելու սիրտըս վշտարեկ ,
Քոնն եմ եղել միշտ, քոնն եմ հավիտյան :

1900—Ալեքսանդրապով

Քաղաք վարդը թշվին ետ չի դա նորից ;
Եվ չի դա հայետ ժամն անցած օրից :

Անցած կյանքը հիմա երադ է , մշուշ ,
Վիշտն ու սերդ անուշ՝ հուշեր են քնքուշ :

Սիրտը մաքուր պահիր ու բարի արա ,
Դր ամպ չընստի հուշերիդ վըսա :

Մի վռադիր . . . մահին կհասնիս վաղ-ուշ ;
Չեղածի պես կանցնին և երադ , և հուշ . . .
1904—Մոսկվա



Կուզենայիր , Երբ կորին
Գամ հոգնաբեկ ուխտավոր
Նվիրական քո շեմքին . —
Տեսնել այնպես նորից քեզ ,
Ինչպես տեսա , սիրեցի ,
Սիրեցի քեզ սրտակեզ :

Շնորհներով կուսական ,
Աչերիդ մեջ նըվիրում ,
Խոստումներով դյութական .
Ճակատը՝ լույս ու ճաճանչ ,
Եվ ժպիտով հոգեթով
Եվ ճայնիդ մեջ՝ սիրո կանչ :

Շուրջը՝ դարնան բույր ու շաղ ,
Շուրջը՝ կարկաջ ու կանաչ ,
Եվ երազները չքնաղ :

1925 մենետիկ

Լուռ դիշերին մտքիս դիմաց
Շատ ստվերներ ժողվեցան .—
Ընկերներո՞ւ մեռած , կորած ,
Հոգուս խորքոյ անց կացան :

Նրանց աչքերն՝ անհույս , անսեր ,
Սրտիս խորքը նայեցին ,—
Խոր վերքի պես սիրտը բաց էր ,
Նրանք այնտեղ սուզվեցին . . .
1899 — Աւեքսանդրապոլ



Գագաթներին մով սարերի
Թափառեցի սերը լալով .
Լացը քամին զով սարերի
Լսեց , տարավ թելին տալով :

Ու լըսում եմ լուռ դիշերին
Լացը հիմա ամենուրեք .
Միշտ ծեծում է դուռըդ քամին ,
Բայց չես լըսում նրան երբեք . . .
1904



Վարդի շրթունքըդ , աղջիկ աչագեղ ,
Համբույրի համար հասել է ահա .
Օ , մի՛ արձակիր մաղերըդ շքեղ
Հոգնած , ջարդված իմ կըրծքի վրա :

Գարունը վաղուց գնաց իմ սրտեն ,
Եվ սիրտը հիմա՞ ծանըր , վըշտահար ,—
Վարդի շրթունքըդ հասել է աբդեն
Հնչուն համբույրի , բայց ոչ ինձ համար . . .
1906

Գիշերն երազով, գօրը կարստով
Նաղելի տեսքիդ մընացի անհաս .
Աշխարհը հարթեց քո անուշ հոսով,
Մենակ ևս քեղնից մընացի անմաս :

Ա՛յս, գինե տեղը վարդեր ռւլարկի՞ր,
Համբուրեմ, դընեմ մարած աչքերիս .
Գոնե վարդերիդ վշերն ուղարկի՞ր,—
Համբուրեմ, դըգվեմ սիրավառ սրտիս .

1906



Աղբյուրի մեջ մի մարալ
Ենւքն է տեսել եղնիկին—
Ու ման կուղա միալար
Մուրիկ-մուրիկ եղնիկին :

Այն եղնիկն էլ երազին
Մարալի ձայնն է լսել .—
Ու ման կուղա մարալին
Մուրիկ-մուրիկ զօր-դիշել . . .

1904—Հառիճ



Է՛յ դու, ջահել, հպարտ հպասակ,
Անցար սսկի ամպի պես .
Քեզ հետ տարար երգեր ու սեր,
Տարար գարունն իմ սրտես :

Քար կը սեղմեմ սրտիս հիմա,
Կելնեմ սարերը լալու .—
Ա՛յս, լայ՝ ի՞նչքան, ի՞նչքան կուղես,
Անցածն էլ ետ չի գալու . . .

1905—Ախալքալաք

Յս կուղեի արևալան
Անապատը ամայի ։
Ուր մենքենակ և վըշտահմբ
Թափառեի ու լայի։

Աշխալիհից դուրս ու սրտարաց
Անապատում ամայի
Տաք ժայռերը ամուր գրկոծ
Համբուրեի ու լայի . . .
1906.-Մըհն



Առայլոտուն ծով ճաճանչում
Արտուտն ուրախ ճախրում է վեր .
Ցակ ու խալար չի ճանաչում
Երգում է լույս, երգում է սեր։

Իսկ իմ սիրտը տխուր ու սե,
Շուրջը՝ ավեր ու ցավեր .
Եվ իմ վշտոտ գլխի վերեւ
Արտուտն ուրախ երգում է սեր . . .
1905



Միշտ զգում եմ ես, որ մի հեռավոր,
Օտար աշխարհում ինձ պես վշտահար
Մի սիրտ է այրվում՝ անհայտ, մենավոր
Եվ երազում է, թախծում ինձ համար։

Եվ թվում է ինձ, որ սուրբ համբույրով
Ես վայրիայում եմ ձեռները նրա .
Եվ գուրգուրում եմ, գըգվում կարստով
Քնքուշ գըլուխը իմ կըրծքի վրա . . .
1905-Աւելքսանդրապով

Եվլ արծիվ մի սև իջավ սըրմաշավ,
իջավ երկնքից և կուրծքըս փըշրեց
եվ սիրտըս կըտցեց, և սիրտս տարավ
Դեսլի վեհաբեր, ժայռեր բարձրաբերձ:

Եվ նետեց սիրտըս վառ լազուրի մեջ;
Խլոխտ բարձունքին հզոր լեռների,
Եվ շուրջըս այն օրից լսում եմ անշեղ՝
Շառաչումները արծվի թերի...

1905—Կարս



Կնոջն ուղեցի հավատալ նորից,
Լալ ու երազել տուաջլա նըման.
Բայց արյունոտվեց խեղճ սիրտըս նորից,
Եվ որբ մնացի և թափառական:

Երեր, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի,
Չեմ բազիսի դուռըդ ունայն քամու պես.—
Բայց կուզենայի հավիտյան լայի,
Եվ չըցամաքեր արցունքը սրտես:

1905—Թիֆլիս



Եռ նըշխուն նոռու դառը վրադ,
Ես քո թուփին եմ, շուքեղ մեջ.
Դու քնքուշ վարդ վառը վրադ,
Ես տերելդ եմ վրչիդ մեջ:

Վախենամ՝ թե մի օր էլ դան,
Քեզի քաղեն ու տանին.
Ես թուփ-տերեկ մընամ, չորնամ,
Զարկե գետին ցուրտ քամին...

1906

Քոյլը իմ նազելի, նայեր քո դէմաց
Վիրավոր, ավեր սիրաւս եմ լացել
Ա՛խ, նվիրական ինձ քո դիրկը բաց
Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել...
1904

Քնքիւշ ձեռներով աչերսս սըրբիր,
Մի՛թող ինձ լալու—ես շատ եմ լացել,
Ճակատիս մռայլ՝ մշուշը ցըրիր,
Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել...
1904



Ա՛խ, իմ սիրուս վառ դարունը թոշնեցավ,
Զաւ վարդերս կոկոններում մընացին.
Դալար սրտիս սուրբ արցունքը քարացավ
Ու ծանրացավ սրտիս վրա դառնագին:

Մեռի՛ր գընա՛... առանց քեզ էլ կյանքը կա,
Ուրիշ վարդեր կշողշողան դարունքին.
Ուրիշ շըրթներ գուցե վազը կամ հիմա
Կը համբուրեն քո սիրածին կաթոգին...
1904



Ամեն գիշեր իմ սլարտեղում
Լալկան ուռին, հեզ ուռին
Վշտատոչոր լաց է լինում,
Լաց է լինում իմ ուռին:

Եվ սըրբում է առավոտու
Կույս արեւ նազելի
Հուր ծամերով հեզ ուռենու
Արցունքները բյուրեղի...
1892—Արքանդրապու

Երազիս տեսա, իլոր ծովիլի ափին
Ես ընկած էի խոր վերքը սրտիս.
Եվ ալիքները մեղմ ծփում էին՝
Անուշ օրորսավ ինձ անդորրը տալիս :

Երազիս տեսա, որ ընկերները
Ուրախ երգելով անցան ծովափով.
Սակայն... ոչ մեկը ինձ ձայն չըստվեց.
Իսկ ես լուռ էի մահվան խոր վշտով...
1901—Յուրիիս



Արազի ափին բոստանըս լինի,
Սալլի ուռ տընկեմ, վարդեր ու լալա.
Հով ուռենու տակ քողակիս լինի,—
Օջախիս միջին կրակ բոցկըլտա:

Ու սրտով սիրած Շուշանըս լինի,
Օջախիս կողքին գուրգուրենք իրար.—
Արազի ափին բոստանս լինի,
Ծով-քրտինք թափեմ Շուշիկիս համար:
1902 - Բագու



Շավարշ կուտաս բաղի միջին,
Ա՛յ կարմիր վարդ, շաղի միջին.
Բուրմունքի պես հյուսվում ես վեր
իմ զառ ու լալ խաղի միջին:

Խելքս է տարվել քո ալվարդին,
Ճար չես անում իմ ծով-դարդին.
Բլբուլի պես թոնիմ քեզ մոտ,
Կարուել եմ ծոցիդ դարդին:
1907—Վիեննա

Արտհնան՝ ուսին, վարդը՝ սիտին;
Գարունն եկալ, ջան՝ գարուն,
Տուղար՝ ծացին, աստղը՝ ճակտին,
Գարունն եկամ, ջան՝ գարուն . . .

Արտուր անուշ երգում է սեր;
Սիրտը լուռ է; քանց ձըմեռ;
Ես ի՞նչ կարմիր վառ արել է,
Սիրտս մութն է, քանց գիշեր:

1899



Ես եր մեռնիմ ու իմ զերքեց
Եթե մի վարդ դուրս ծլեր,
Եվ ընկերը հեռու տեղից
Գար՝ շիրմըս այցելեր.

Եթե նրա խոր աչերից
Մի ցող վարդիս մեջ ծորեր, —
Այն սուրբ ցողը սիրտս կերթար,
Վերքըս խորունկ՝ կը բուժեր:
1898—Օդեսա



Այսօր ձեր տուն մեծ խնճույք կա,
Դու կը բուրես վարդի պես.
Չորս լուրբը հարուստ տղա,
Դու կը փայլես աստղի պես:

Ձեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր,
Ա՛խ, ես կանգնել կը դողամ.
Դու դահճի պես ա'լ ես հաղել, —
Ալբդ շողքն է իմ արյան . . .
1900—Թիֆլիս

— կող ի՞նչ կըրակ կանես, մերի՛կ:
— «Բալա՛ս, վերքու դեղ կեփեմ»:
— Ա՛խ, իմ վերքը սիրտս է, մերի՛կ,
Դեղ ու դարմանդ ի՞նչ անեմ.

Սրտիս վերքը խորն է, մերի՛կ,
Լավի դարձի հույս չըկա.
Մի՛ քըրքըրիր սիրտըս, մերի՛կ,
Խոր խոցերուս ճար չըկա...



Անտուն քամու պես վակ դուռըդ, գիտե՞ս,
Ես շատ եմ ծեծել ու դու չես բացել.
Սարերն եմ ընկել վշտից խելագար
Ժայռերին զարկվել ու շատ եմ լացել:

Սարերն են վկա, որ օրից մի օր
Վատ չեմ խոսացել, գանդատվել քեզնից.
Ավա՛զ, լցրել եմ լացով սար ու ճոր,
Բայց չեմ գանդատվել բամբասել քեզնից:
1904



Քեզ չը տեսնել՝ ուխտել էր,
Բայց, ա՛խ, նորից հանդիպա.
— Քուրի՛կ, վերքըս լավ է հիմի,
Մի սե սպի տեղը կա:

Ին սե սպին սե ամպի պես
Սկցուց դեմքը արևի.
Ու ման կուգամ սե շուքի պես
Սարե՛ր, ճորե՛ր ամայի...
1899 - Ալեքսանդրապոլ

Այս ուսոււ տակ մենք երգեցինք
Սիրո չքնաղ երգերից .
Մենք երգեցինք ու շնչեցինք
Բուրմունք, ժըպիտ ու թախիծ :

Այս ուսոււ տակ, ընկե՛ր անդին,
Դու ինձ սիրել խոստացար .
Անցան տարիք,—չորսավ ուսին,
Ու դու էլ ինձ մռուցար . . .

1901



Ահ աչերեն չա՛տ վախեցի՛ր . . .
Ին մութ, անծեր զիշեր է .
Մութըն ա՛հ է, չարքեր չա՛տ կան, —
Ահ աչերը մի՛ սիրե:

Տե՛ս իմ սիրալս—արուն-ծով է .
Էս չարքերը զարկեցին .
Ին օլլամնեն զաղար չունիմ, —
Ահ աչերը մի՛ սիրե . . .

1897—Ալեքսանդրապոլ



Լուս զիշերին հեռու տեղից
Մի երգ հասավ իմ սրտին,
Այն ո՞ւմ սիրան էր՝ սեր ու թախիծ
Բերեց, փարեց իմ սրտին:

Կարոտներով հյուսված երազ
Բուրեց երգը թախծազին, —
Ե՛կ, ընկե՛ր իմ, անհայտ, անհաս,
Մուրը սեր ծփաց իմ հոգին:

1895

իմ այլող վշտից սիրտըս է մաշլել,
Կյանքըս է մաշլել, էլ լո՞նչս մնաց.
Լամ ու արցունքըս աղեծով դառնա, —
Միւրյն թե մայրըս վիշտո չխմանա:

Ա՛յս, դլուխս առնիմ, ընկնիմ սարերը,
Զարկեմ քարե-քար, զարկեմ քարե-քար.
Միւրտո դայլերին լող լատին դառնա,
Միւրյն թե մայրըս մահըս չխմանա:

1900



Դուռըս ափ առած՝ կը ծեծե քամին
Ու չեմքիս վրա տխուր կ'հառաչե,
Բայց ևս մենակ չեմ. մի ձայն մտերիմ
ինձ անուշ, անուշ, անուշ կը կանչե: —
Այդ՝ ձեր մրմունջն է, հայրենի ջրե՞ր,
Այդ՝ լոթովանքդ է, իմ սիրուն մանկի՛կ.
Իմ վառ, դմբուխտյա հայրենի ջրե՞ր,
Իմ ոպայծառ, սիրուն, իմ անդին մանկի՛կ...
1911—Կ. Պոլիս



Ես որ մեսնիմ՝ ինձ կթողեք
Ալազյազի լանջերում.
Որ Մանթաշից հովերը դան,
Վրաս հելման ու երթան:

Գերեզմանիս չորս դին վովին
Տորեն արտերն ու ցոլան,
Եվ ուռիներն՝ մազերն արձակ,
Վրաս ընկնին, անուշ լան...
1899—Ղազարապատ

Զդիտեմ, թե ո՞ւր
Անհայտ, հեռավոր
Մի սիրտ կա տիսուր,
Ենակ, մենավոր:

Նա է՝ ուշ դիշեր
Իմ դուռը ծեծում,
Նա է՝ միշտ անտես,
Կրծքիտ հեծեծում...
1910—Թիգլիս



Նա մի վոքրիկ աղջիկ է՝
Լուսափիթիթ աղավնի,
Կհանդիպեմ ամեն օր,
Խելքս դլինես կ'տանի:

Ո՞ւրկից կըդա, չդիտեմ,
Ո՞վ է, ի՞նչ է, ո՞ւր կերթա—
Կուզեմ ընկնեմ ետեմ,
Երթամ, ուր որ նա կերթա:
1917 Ժընկ



Հայրենի աղբյուր,
Երգեցս վըճիտ
Հյուսնել կուզայի
Բյուրեղ կարկաջիւ:

Ես հիմա այնպիշու
Հոգնած եմ ու լուս,—
Դու հավերժ կերպես,
Հայրենի աղբյուր...,
1918—Ժընկ

Ո՞ղակեղ է ընկած
Այն քարը հիմքի,
Որ հողիս վրա
Շիրիմ պիտ լինի:

Իմ թափառ կյանքում՝
Մարդ ի՞նչ իմանա.
Չե՞մ նստել, թախել
Այդ քարի վրա...

1909—Երևան



Անդիք, և' անհայտ, և' անհիշասարկ՝
Ամայի դաշտում մի գերեզման կա.—
Ո՞վ է հող դառնում այդ լուս քարի ասել,
Ո՞վ է լաց եղել այդ քարի վրա:

Համըր քայլերով դարերն են անցնում.
Արառյան երգում է իր գովքը գարնան.
Ճուրջը ոսկեղեն արտերն են ծփում,—
Ո՞վ է երազել և սիրել նրան...

1909



Հայրենի դետի զմբուխտ ափերին
Մեր հին անակն է կքել մենալոր.
Ա'կ, ես հեռավոր ճանապարհներին
Քայլում եմ հիմա մենակ ու մոլոր:

Շաշում է ահեղ՝ իմ գլխի վրա
Աշնան ցուրտ քամին այս մութ գիշերին.—
Վառվո՞ւմ է արդյոք օջախս հիմա
Հայրենի դետի զմբուխտ ափերին...

1913—Ժընե

Զյուն է դալիս, ու թախծալիր
Ծածկում դաշտերն ամայի. —
Քնքուշ, քնքուշ ինձ սիրելիր,
Ու նոր մեռած լինելի...

Հեկեկայի սրախ սրտում
Անունդ անուշ ու աղվոր.
Ու ձյունը դար մեղմ ու տրափում.
Ծածկել շիրխմ հեռավոր...

1913 - ԺԼՆԻ



Ո՞րտեղ պիտի հանգչի մի օր,
Գլուխս անտուն, թափառական.
— Անապատո՞ւմ՝ չոր ու տոչոր,
Թե ծովափին ալեծածան:

Վըրաս պիտի ձլդե՞՞ քամին
Անուշ հողը մեր դաշտերի,
Պիտի բերե՞ արցունքի անգին,
Ի՞մ հեռավոր, իմ սիրելի...

1912 - ՎԻԵՆՆԱ



Դիշերն եկամ, աստղերն ելան,
Լուսնյակն անուշ ցոլցլաց,
Ծաղկունքն ամեն նոր քուն մտան՝
Ամպի ցողով, լուսնի շողով
Հարհանդմարմանդ քուն մտան:

Դուք է՛լ քնեք, սսկի աստղեր,
Վարդ ու բլբո՛ւլ, քուն եղե՛ք,
Օրոր-ծովե՛ր, շորոր-հովե՛ր,
Անո՛ւշ-անո՛ւշ քուն եղե՛ք:
Դուք է՛լ մո՛ւշ-մո՛ւշ քուն եղե՛ք:
1897-Աւելսանդրապու



Ա՛խ, իմ ճամբես մոլոր դընաց,
Անտակ ծովին դեմ առա.
Վա՛խ, իմ սերլս անցա՛վ դընա՛ց,
Ես կանչելու ճար չըկա:

Դումանն եկավ, ծովը ծածկեց,
Ին խաս հավքերն ի՞նչ եղան.
Դարդը եկավ, սիրտը ծակեց.
Ին ալ-վարդերս ի՞նչ եղան:

Ա՛խ, խաս հավքերն ծովում խեղդվան,
Ագուավն վըրես կը դուռա,
Աիրուս զաւ-վառ վարդերն թուման,
Բլբուլս անթե կը սըդա...
1897-Բագրան



Դա՛րդը լացեք, սարի սըմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դա՛րդը լացեք, բաղի բլբո՛ւլ,
Ամոլշող երկնուց զով-հովեր...

Երկինք-դետինք զլուխս մթնան,
Անտուն-անտեր կուլամ նո.

Յարիս տարան—ջանիս տարան,
Հոնդուրաս—հոնդուրաս կուլամ ես . . .

Ա՛յս, յարս ինձի հանեց սըրտեն,
Անձար թողեց ու գընաց.
Սըրտիս սավանեն—խորունկ յարեն
Անդեղ թողեց ու գընաց :

Դա՛րտըս լացեք, սարի սմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դա՛րտըս լացեք, բարի բլուռ,
Ամպչող երկնուց զով հովեր . . .

1893 Լայպցիդ



Սիրեցի, յարս տարան.
Յարա տըլին ու տարան.
— Ես ի՞նչ զուլում աշխարհ է,
Սիրտս պոկեցին, տարան:

Յավըս խորն է, ճար չըկա,
Ճար կա, ճար անող չըկա.
— Ես ի՞նչ զուլում աշխարհ է.
Սրաւացավ ընկել չըկա:

Լա՛վ օրերըս գնացի՞ն,
Ափսո՞ս ասին, գնացի՞ն.
— Ես ի՞նչ զուլում աշխարհ է.
Սև դարդերս մնացին . . .

1898—Օդեսա

— Ալիրո՛ւն աղջի՛կ, երկից լինիմ,
Դուն ի՞նչ կը կ'ս:

— Ալիրո՛ւն տղա, դարուն կը լիմ,
Քեզ դարդարեմ:

— Անո՛ւշ աղջիկ, երկինք լինիմ,
Դուն ի՞նչ կը լիս:

— Անո՛ւշ տղա, արև կը լիմ,
Ալիրտըդ վառեմ...

1899



Մաճկալ ես, բեզարած ես,
Առը շուռ տո՛ւր, շո՛ւտ արի.
Ծովի սես քրտնած ես,
Եղներն արձկի՛, տուն արի՛:

Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին՝ սառի.
Ալ գողնոցս կապել եմ,
Արի թառան, թը՛ռո, արի:

Տեղ եմ քըցել շվաքում,
Քամին կուզա, զով կանի.
Լուսնի շովքն է մեր ծոցում,
Զափ տո՛ւր, չափ ա՛ռ—շուտ արի՛:

Դաղբած, բեզարած յա՛ր ջան.
Ամպերն ելան, դե՛հ արի.
Բեզարած ջանիդ զուրբան,
Ծըտից թե առ, թե՛ղ արի...

1893—Օրեր-Հուց

«Ա՛խ, կակաչներ, զուք արհերես ելար
Յարար բալես երը կելնի բանգեն.»
Մոռս խոսքեր

Կըսունկները շարա՞ն-շարա՞ն
«Կը՞ռո, կը՞ռո» կանչին ու եկան.
«Գարունն եկա՞վ, գարունն եկա՞վ»
Անուշ կանչին ու եկան...

— «Զա՞ն, ջա՞ն մեռնիմ ձեր ձենիկին,
Ա՛յ կոռոնկներ, նըշխուններ,
Յարա՞ր տեսա՞ք խօ բալեկին,
Յարար խարար չե՞ք բերել:

Բալիս կաղին, բանդը դըրին,
Տարին եկավ, բոլորավ,
Խարար չունիմ, դարար չունիմ,
Աչքո ճամբին ծով կըորավ:

Գարունն եկավ, — արեվերես
Ելան ծիլ ու ծաղիկներ.
Ա՛խ, յարար ե՞րբ աղիզ բալես
Կելնի բանդեն, կըսունկնե՞ր...

Կըսունկները շարա՞ն-շարա՞ն
«Կը՞ռո, կը՞ռո» կանչին ու եկան,
«Գարունն եկա՞վ, գարունն եկա՞վ»...
Անուշ կանչին ու անցան...

1897—Ալեքսանդրապոլ

ԱԱՅՐԻԿԱՅԻ

Հայրենիքն հեռացել եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
Ազիզ մորես բաժանովել եմ,
Տըխուր-տըխուր, քուն չունիմ:

Սարեն կուգաք, նիշուն հայլքեր,
Ա՛խ, իմ մորըս տեսել չէ՞ք.
Ծովեն կուգաք, մարմա՞նդ հովեր,
Ախըս բարե բերել չէ՞ք:

Հայլք ու հովեր եկան կըշտիս,
Անձեն դիալան ու անցան.
Պատակ-սըրտիս, վավագ-սըրտիս
Անվոս դիալան ու անցա՞ն:

Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին
Կարոտցել եմ, մայրիկ'կ ջան.
Երնե՛կ, երնե՛կ, երազ լինիմ,
Թըռնիմ մուրդ, մայրիկ'կ ջան:

Երբ քունըդ դա, լուս գիշերով
Հոգիդ զըրկեմ, համբույր տամ.
Սըրտիդ կըպնիմ վառ կարոտով.
Լոմ'մ ու խընդամ', մայրիկ'կ ջան . . .

1893—Դրեղին



Է՛յ կանանչ ախալեր, դու բարով եկար,
Դո՞ւ բարով եկար, իմ կանանչ ախալեր:

Մով մահուշակով ծաղկուն սարելեն
Արտուտն ու արս ինձի ձեն տվին,
Ու գարնան անուշ արևն ոսկեղեն
Ինձի ձեն տվին՝ սար ու ձոր ելնիմ:
Երանի՛կ ձեզի, սարեր ու ձորեր,
Նշխուն հագել եք գարնան զուքսերով.
Ա՛խ, սիրտս մեռավ ծով-դարդերի մեջ.
Գարնան զուքսերին մնաց կարոտով:
Է՛յ, սարեր, ձորեր, դուք առաջվանն եք,
Բլրո՛ւլ ու բաղեր, դուք առաջվանն եք,
Լոկ մենակ ես եմ փոխվել ու չորցել,
Բլրո՛ւլ ու բաղեր, դուք առաջվանն եք,
Ա՛խ, ես եմ փոխվել ու աշխարհի մեջ
Անհույս ու հիվանդ ճամբորդ եմ դառել,
Ճամբես մոլորել, կե՛րթամ փըշի մեջ,
Սարեր ու ձորեր, դուք առաջվանի եք...

Է՛յ կանանչ ախալեր, կուզաս դաշտարի
Ու գերեզմանս մամոռով կզուքես,
Իմ կանանչ ախալեր, դալդ միշտ բարի,
Խեղճ գերեզմանս մտքեղ չքցես...

1902—Կաղզվան

Բալես ունի հնդումաթա,
 Ոսկի օրոցք, ատլաս ծածկոցք,
 Պուսլուշ դարդար, նըշխուն բալա,
 Պաճիկ կենես... օր, օր, լա, լա,
 Նանիկ կենես, նանի՛, դա՛ր-դար.
 Աչքդ ու ունքը—աստղ ու կամար:

Յորեկ եղավ, ոչխարն եկավ,
 Ազիզ բալես քընած մընաց.
 Վեր ել, բալա անուշ ճըղա,
 Տիտիկ արա, ծիծիկ մամա՛,
 Պիծիկ-միծիկ տոտիկ արա'.
 Հո՛սպա, բալիկ, քունդ անուշ,
 Շաքար ու նո՛ւշ, թուշդ անուշ:

1893



Ա'ին, մեր սիրով լի դարդ ու ցավ,
 Օր ու արև չը տեսանք.
 Վա՛ին, մեր կյանքը սեվով անցավ,
 Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն-խմեն
 Աշխարհի ճոխ սեղանից.
 Մենք աշխարհի իորթ տըղերքն ենք,
 Մեղ փայ չըկա աշխարհից:

Խեղճ աղքատի հողին դուրս գա,
 Քարից-հողից հաց քամե.
 Բեռով հացը հարըստին տա.—
 Հարուստն իշխէ, վայելէ:

Խեղճ աղքատը դառը դատի, —
Դատաբեկ նըստի... է՛յ աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վըստ, քար-աշխա'րհ:

Ա՛յս, մեր սիրուլ լի դարդ ու ցավ,
Օք ու արե չը տեսանք.
Վա՛յս մեր կյանքը սեվով անցավ,
Աշխարհից բան չիմացանք:
1893—Օդեսա



Է՛յ դու, մահվան անմահ աշխարհ,
Գերեզմանի պես տխուր,
Բախտ ես կըուել մարդուս հսմար,
Զնդան ամուր, ամբակուռ:

Է՛յ զուլում բախտ, դու առյուծ ես,
Խեղճ եղնիկ եմ ճանկիդ մեջ.
Ինձ քարեքար հերիք զարնես,
Սիրոս քամես ճանկիդ մեջ:

Ո՞ւմ զանգատովիմ, զիվան կանչեմ,
Քո ճանկերեն ազատովիմ.
Զեռք ու ստքս անոնես շլթա, —
Ու ելք չունիմ, հույս չունիմ:

Ինչքա՞ն կանչեմ ու ազակեմ,
Վերջն էլ պիտի, փուչ-աշխարհ...
Մի բուռ հողով բերանս ծեփես,
Յավի, մահի սեվ-աշխարհ...
1900

Հովելին առան սա՞ր ու դարձ' ր,
Ամպերն ելան, մութն ընկալ,
— Անդին մերի՛կ, հերեք հուսաս,
Քո շողջողուն ասողն ընկալ:
Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չե՛մ դա
Վերքը սրախո՛ տուն չե՛մ դա:

Կաթիլ-կաթիլ ամպն է ցողում
Սև ու ողառոր երկնքեն.
Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում
Իմ անդյուման, սե՛լ սբանեն:
Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չե՛մ դա.
Վերքը խորն է, ճար չը կա...

Անդութ կյանքում վերք ստացա
Սրասանց սիրած ընկերես.
Անխիղն կյանքում վերք ստացա
Անուշ սիրած քուրիկես:
Լա՛ց, մերիկ ջան, որ էլ չե՛մ դա.
Ազիզ բալեկ էլ չը կա...

1895 - Ենա



Էս ջինջ աղբյուրն է՝ ուրախ, կարկաջուն,
Վարդերի միջով ձորն իւ վար կերթա, —
— Ա՛խ էս իմ յարն է՝ սիրուն, քըչքչուն,
Ուրիշ տրդի հետ ոլսակիւ կերթա...

Դու ոլսա՞կ կերթաս քո նոր յարի հիսու,
Բարով վայելես, իմ աղիզ քուր ջան, —
Ես էլ յար ունիմ հեռո՛ւ տեղերում,
Նոր սիրուս հիմի գուշիս, տես կերթամ:

Յեւ ձիս կը նստիմ ու սև գլշերին
Ասպապըս կապած, կերթամ յարիս քով.
Իմ սերըս հիմի մեջ քովին, չոլին
Ինձի կը սպասե սիրով կարոտով:

Հե՛յ, փոթորանքն է իմ հարսը ազեղ.
Վիշապ-քամին է յարըս աննման.
Կերթամ սիրվելու, սիրելու նըրան
Ու տաք գըրկի մեջ մեռնելու կերթամ...

Ես իմ բարդիքն են, անուշ կը խըշչան,
Ու ձայնը կ'երթա հեռո՛ւ, շա՛տ հեռո՛ւ,
Ա՛խ, շա՛տ կը լսես էս ձայնը, մեր ջան,
Բայց բալիդ ձայնը էլ չես լսելու:

Կը'նկնիմ չոլի մեջ հեռո՛ւ, անդյուման,
Ավաղների մեջ, բարկ արկի տակ.
Ա՛խ, ձիս կը փորե ինձի գերեզման,
Ու քուն կը մըտնեմ դարդիս հետ մենակ...

1902—Սարիղամիշ



Ծամերդ հյուսել՝
Կանգնել ես կալը.
Օրըս սև արել՝
Կապել ես ալը:

Փշերն ինձ թողիր,
Դու քաղիր վարդը,
Դու սիրոս քըցիր
Ես դժար դարդը:

Ապրե սար ալիր,
Ռւ դադար չունիմ,
Դարդամահ արիր,
Անունիդ մեռնիմ . . .

1902—Բասեն



Արեն իջակ սարի գըլխուն,
Դար ու դաշտում լույս չըկա.
Հավք ու թըռչուն մըտան խոր քուն,—
Ա՞խ, ինձ համար քուն չըկա:

Լուսնյակն ընկակ երթիկից ներս,
Կըշեռքն ելակ երկընքում,
Զով հովերն էլ մըթընչողես
Աստղերի հետ են զըրցում:

Սիրուն աստղե՛ր, անուշ հովե՛ր,
Յարըս ո՞ւր է՝ էս դիշեր:
Պարզ երկընքի նըխշուն աչե՛ր,
Յարիս տեսա՞ք էս դիշեր:

Լուսը բացվակ, դուսը բացվակ,
Այսպ ու զամպ է,—թոն կուգա.
Ալ ձին եկակ, անտեր եկակ,
Ա՛խ, յարս ո՞ւր է, առն չի դա . . .

1891—Եջմիածին

Յարս նստել վանքի դըռան
Նուռ ու խնձոր կը ծախե .
Հարս ու աղջիկ քովը կուղան ,
Եժան կուտա , կը բաշխե :
Ա՛խ , յարս խնձեն խոսվել է ,
Ինձի շատ թանդ կծախե :

Ես ո՞նց անեմ . . . դարդիս դարման
Յարիս նուռն ու խնձորն է .
Ի՞նչ որ ունիմ , յարիս կուտամ ,
Թաք ուրիշին չը ծախե :

1897 - Բագարան



Ի՞նչ ես դաղաղում , ի՞մ վիրավոր սիրու ,
Որ դաղաղում ես , ի՞նչ սլիտի անես .
Աշխարհը իրեն ճամփով կընթանա ,
Դուր խեղճ , դուր անդոր , ի՞նչ սլիտի անես :

Մարդն այս աշխարհում , ինչպես մի
թուչուն
Անդուռ ու անել մեծ վանդակի մեջ . —
Սիրու իմ , դաղաղիս , ի՞նչ սլիտի անես
Անդուռ ու անել այս վանդակի մեջ :

Մարդ ծընած օրից դերեղմանի հետ
Շլղթայված է սլիրկ , ուր էլ որ երթա . —
Սիրու իմ դաղաղիս , ի՞նչ սլիտի անես ,
Ո՞ւր սլիտի թըռնիս թհերըդ ըլղթա :

Տոկա՛, համբերի՛ր, ի՛մ վերավոր սիրա,
վընիս հայացքով աշխարհին նայի՛ր.
Աշխարհը իրեն ճամբով կընթանա,
էյ, վերավոր սի՛րտ, դու մի՛ դաղաղիր . . .

1903—Ալեքսանդրապոլ



ին ամպի նըման խուլ որոտումով—
Սիրտըս դարդով լի՛ կըսիվ գընացի·
ին ամպի նման ժեռուտ սարերով,
Քուրի՛կ ջան, քեզնից հեռո՛ւ գընացի . . .

իլ մի՛ որոնիր քո աղիդ յարին
Կըսվից ետ դարձող կըտրիծների մեջ.
Մենակ փլնտուիր դո՛ւ իմ քաջ սեռուկին
Մնաեր խըրխընջող՝ լուռ դաշտերի մեջ . . .

իլ մի՛ որոնիր քո աղիդ յարին
Իմ ընկերների ուրախ խընջույքում.
Բանձրիկ սարերից ոռնացող քամին
Վրաստ մի՛ բուռ հող կը քցե դաշտում . . .

Ու օտար մայրեր ինձի տես կուգան,
Սև հողիս վրա արցունք կը թափեն.
Ա՛խ, օտար քուրեր ինձի տես կուգան
Ու վրաստ անո՞ւշ ծաղկունք կը թափեն . . .

1903—Կարս

Եղնիկները լուսաբացին
Սուր ժեռերով անցկեցան
Մեղմ նայեցին հուզված լճին,
Լոխեմնջիկ անցկեցան:

Ա՛խ, իմ սերս՝ կահաչ-կարմիլ,
Դառավլ ինձի ցավը ու ցեց.
Ա՛խ, իմ կյանքս՝ դառվառ կարմիլ
Վիշտս կերավլ ու մաշեց:

Ես լ՞ոչ անեմ, ես ո՞ւր չքովեմ—
Բնկնիմ չոլերն ամայիւ—
Երնե՛կ մեռնիմ, ու սիրտս ուսեն
Գել ու գաղան ամեհի:

Ա՛խ, եղնիկներ, դադար չունեմ,
Սիրտս՝ կրակ վաս-վասման,
Մարդիկ կուգան, ինձ կնայեն,
Լոխեմնջիկ կահց կենան...

1897—Խճկոնք



Աշան սղտո՛ր, սղտո՛ր ամսպեն
Արցունքի պես թոն կը դա.
Ա՛խ, ո՞ւր կերթա իմ սե ճամրեն.
Ա՛յ բախտ, միթե վերջ չըկա:

Արդյոք վշտոտ, չոր դլուխը
Ո՞ւրտեղ պիտի քուն մտնիւ—
Աիրած, կարոտ սրտի՞ վրա,
Թհ՞ դաշտի մեջ ամայի...

ԱՌիւ, աչքերըս ո՞վ պիտ ծածկե, —
Սնդին մա՞յլըս՝ համբույլով,
Թե՞ ձյունն ու հող՝ քամին ծեծկե
Տատրակների վույլույով:

1897—Հառիճ



Ես ճամբեն ոլորմոլոր,
Սև ծովի բոլոր կերթա. —
Շուշան յարս ինձի թողել՝
ին տղի հետ ո՞ւր կերթա:

ԱՌիւ, ճամբեն—մահի բերան,
Օձի պես դալար կերթա.
Չոլերի մեջ, անդերեզման,
Ծովին է լալիս իմ վրա:

Սեդ արծիվը աչքս է կացում,
Աչքս կարոտ՝ Շուշանին.
Անդութ դայլը ոիրտս է հանում,
Ոիրտը ծարավ՝ Շուշանին:

Ու ճամբեն, մութմոլորուն,
Սև ծովի բոլոր կերթա.
Շուշան յարս ձեռքերն արյուն՝
ին տղի հետ հարս կերթա:

1893

Ժեռ, սե քարը սրտիս վրա
Գերեզմանիս մութ խորքում,
Դարդի սարը սրտիս վրա՝
Բնել էի հողի քուն:

Գարունն եկավ, Շուշանս եկավ
Տատրակի հետ ձայն տվեց,
Տատրակս եկավ, քարիս նստավ,
Ինձի անուշ ձայն տվեց:

«Ե՛լ, աղիղ ջան, Արփաչայի
Ուռիները ծաղկում են.
Ուռիներեն ճյուղք եմ բերել՝
Քեզի իրենց կանչում են:

— «Ե՛լ, աղիղ ջան, դարունն եկավ,
Ալբալ հագան սար ու ձոր.
Քեզի շաղաղ վարդ եմ բերել,
Երթանք, ման դանք սար ու ձոր:

«Ե՛լ աղիղ ջան, հովն է բուրում.
Գառն ու ոչխար սարն ելան.
Ալաղյաղը սիրտն է բացել.
Ալաղյաղին տես երթանք» . . .

Ա՛խ, ժեռ-քարը սրտիս վրա,
Խոր, հին վերքը սրտիս մեջ.
Ու վեր ելնել ես չը կրցա, —
Սերն էր մեռել սրտիս մեջ:
1901—8 յուրիին

ՍԱ-ՄՈՒՅ ամպեր ճակտիդ դիզվան,
Դուման հագար, Ալագյաղ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս է'լ դուման, Ալագյաղ:

Զառ փեշերըդ անցա, տեսա,
Առանց դարդի սիրտ չը կար,
Ա՛խ, խմանաս, ջան Ալագյաղ,
Իմ դարդիս պես դարդ չկար...

— Է՛յ Մանթաշի նըխուն հավքե՛ր,
Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,
Ձեր էդ զառ-վառ, խաս-կետուրներ
Կսելնային, քանց գիշեր:

— Է՛յ Մանթաշի մարմանդ հովե՛ր,
Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թույն ու տոթի կփոխվեր:

— Հե՛յ վա՛խ... կոտրան իմ թեվերս.
Ընկաւ գերկըդ, Ալագյաղ.
Ա՛խ, մեծ սըրտիդ սեղմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալագյաղ...

1898-Օդեսսա



Էս ի՞նչն է ամպում զիլ թեվին կուտա,
Գարնան դովքասան արտօ՞ւտն է նշխուն.
Ու ձենը ինչո՞ւ գարհուրիկ կուգա,—
Վա՛խ, էս ագուավն է գլխիս պտովում:

Ես ուրտեղ կերթամ՝ դու հետս կուզաս,
ինձեն ի՞նչ կուզես, ա՛յ զուլում ազոալ,
Երազիս մեջն էլ վրաս կըկռաս,
ինձեն լ՞նչ կուզես, սևասի՛րո ազոալ:

Արդյոք չլինի՛, որ դու էլ գիտես,
թե ծաղիկ սիրտըս դարդամահ մեռալ.—
Ազիդ մեռելըս քըքըե՞լ կուզես,
Զիվան մեռելըս, ա՛յ իմ բախտապոալ...

1902—Բասեն



Իրիկունն եկալ, տնե-տուն մտալ,
Վառեց ճրազներ՝ կարմիր ու սլայծառ,
Բարի երեկոն, ա՛խ, ինձ տես չեկալ,
Ու տունս մնաց սրտիս սլես խավար:

Տուն դարձան հանդից հարեան, դրկից,
Ռւրախ բոլորան հացի սեղանին.
Դուն ո՞ւր մնացիր, ի՛մ ազիդ կտրիճ,
Աչքս ծոլ դարձալ քու անուշ ճամբին:

Գեշերն էլ եկալ, ու քնածնելսւն
Բերեց երազներ՝ նշխունք ու դառ-լառ.
Ա՛խ, ես մնացի մենակ ու անքուն,
Երազս դուն ես, ու դուն էլ չեկար...

1900—Ճննե

Ջմեռն անցավ, եկավ դարբուն;
 Հալավ բանձրիկ սարերու ձուն.
 Ճամբա բացվավ դարիբներուն:
 Իմ դարիբեն խաբար չի դա.
 Աչքս ճամբին՝ դադար չըկա:

Ղարիբ երկիր ամպ ու մշուշ,
 Իմ դարիբի սիրտն է քըլքուշ,
 Ու կփոխե՞ քըուա ու միուշ...
 Հերի՞ք մնաս, դարձի՞ վաթան.
 Իմ ախպե՞ր ջան, ազիզ յա՞ր ջան:

 Զուրն է սլրծել՝ կուգա սարեն,
 Սարեն, ձորեն... իմ աչերեն...
 Մի՞ նորոգիր սրտիս յարեն:
 Դարձի վաթան, հողն անուշ է,
 Հողն անուշ է, զուրն անուշ է...

1902—Բասեն



✓ Երբ մանուկ էր, լնկերներիս հետ
 Գյուղի կալերում, դաշտերում ծաղկած,
 Ճիպոտներն, իբրև նժույգներ հեծած,
 Մարտկում էինք և ոլանում խենթ
 Դեպիաթային աշխարհներ հեռու,
 Եվ շրջում էինք կախարդ, հմայուն
 Այն վայրերի մեջ՝ անհայտ, անանուն:
 Երբ հասակ առա, նստեցի հաճախ
 Երկաթուղիներ և շոգենալեր,
 Անցա երկիրներ, կտրեցի ծովեր,

Տեսա պերճ վայրեր, քաղաքներ չքնաղ,
Բայց, ավա՞ղ, երբեք-երբեք ըլհասա
իմ ճիպոտ-ճիով ոտք դրած շքեղ
Աշխարհներին հեռու և հեքիաթագեղ:
1935



Յա՛ր, աչերըդ արեգական
շողքով վառված ծովի նըման,
Արքշումե մազերդ արձակ
ծո՛ւփ-ծուփ կըտան հովի նըման
վար կընայես խղճուկ գերուդ
պարզ երկընքի մովի նըման,
Սիրտըս կայրես քնքուշ շնչով՝
անմարելի բովի նըման:

Յա՛ր, աչքերիս լուսը մարակ
քո կարոտով-սիրով լալեն,
Ողջ աշխարհի մալը կըտամ,
չեմ զըրկվի անդին լալեն,
Յա՛ր, գութ արա, կյամքիս գընով
թող մի քաղեմ թըշիդ լալեն,
Շեմքդ եմ ընկած, յա՛ր, խիզ արա,
հողդ եմ լիզում սովի նըման:

Յա՛ր թե մեռնիմ ոտներիդ տակ,
Շահին-շահի թախտ է ինձի.
Փեշըդ քամի գերեզմանիս՝
Փափառելի բախտ է ինձի.
Վըրաս թե լաս, արտասունքդ
Անմահական դեղ է ինձի,
Սիրտըս նորեն կալեկոծվի
Հնդստանու ծովի նման...

1907—Դադարապատ

Անհայտ, անորոշ'չ, անձեւ տեսչերով
Զգտում է հոգիս հեռութ, շատ հեռու.
Տիսուր ու մռայլ, ինչպես մշուշ-ծով,
Խուլ հեծեծում է ափերի վրա,
Եվ ինչպես երազ—և կա, և չկա...
1899—Ալեքսանդրապուր



Կենսական ծայլի հույկերի միջին
Ես ժայռի նման կանդնած եմ ամուրի:
Կայծակն է զարկում իմ վես ճակատին,
Ես ժայռի նման կանդնած եմ ամուր:
Հողմ ու վոթորիկ շուրջըս են հածում,
Ես ժայռի նման կանդնած եմ ամուր:
Գոռ ալիքները կուրծքըս են ծեծում,
Ես ժայռի նման կանդնած եմ ամուր:
Ինձնի՛ց բոնեցեք, խորտակվո՛ղ մարդիկ,
Ես ժայռի նման կանդնած եմ ամուր,
Զեր խարխսխները ոտքիս տակ ձգե՛ք,
Ես ժայռի նման կանդնած եմ ամուր:
1895—Լայզեր



Դիտե՛մ, երկերը շատ դարեր հետո
Եվ պիտի սառի, ճեղք-ճեղք պատառվի.
Եվ այն սառցի տակ, մութ վիճերի մեջ
Մարդկությունը ողջ՝ մեռնի ու թաղվե—
Ա՛խ, սիրաց գոնե տիեզերքի մեջ
Հավերժ տըրուիե՛ր...

1899

Թափվեցին տերևներն աշնան ծառերից՝
թոշնա՛ծ ու դալո՛ւկ:
Թափվեցին երգերս բեկված իմ սրտից՝
տրտո՛ւմ ու թալո՛ւկ:
Թափվեցին աստղերն անհույս երկնքից՝
տխո՛ւր ու անփա՛յլ,
— Թափվեցե՛ք, արցունքնե՛րս, հողուա
լուրքերից՝
անհո՛յլս ու մռա՛յլ... .

1895—Ղաղարապատ



Յո՛վ, եկան աղքեր և քո շառաչին
Խառնեցին իրենց երգերը չնչին:

Եվ հիմա նրանք հավետյան լոել,
Անցել են անդարձ, դարձել առասպել:

Բայց դու, անտարեր, երգում ես կրկին
Բյուր դարեր երգած քո երգերը հին:

Կը գան նոր երգով աղղեր նորանոր,
Կերգեն ու կանցնեն աղղեր բյուրապեր:

Եվ կանհետանան անտաղանագիր,
Եվ նրանց հիշող չի մնա մեկ իր:

Բայց դու, անփոփոխ, կերպես վերստին
Բյուր դարեր երգած քո երգերը հին:

Եղ սակայն մի օր, նման մարդկության,
կը լուս և դու, անդարձ, հավետյան:
1925 - Վենետիկ



Շղարշամպերն երկինքն առան,
Լուսնակն անդորր կշողա,
Լոփի ճահճում հարհանդմարմանդ,
Նուրբ եղեգը կշողա:

Արագիլը՝ մենակ ու լուս,
Եղեգնի մոտ կքայլէ.
Կմտորե՝ խոր ու տիսուր,
Ճահիճն աղոտ կ'փայլէ:

Մուայլ ափին մենակ նստած՝
Սիրտըս անուշ կըթախծի.
Ել անուրջում միտքըս թաղված՝
Բունն աչերիս կըհանդչի...

1895 - Անի



Ազուալների դորշ թեղերով
Աշունն եկալ միդարեր.
Ծաղիկ-սարեր, երթաք լարով,
Դուք էլ, զանդակ-աղբյուրներ:

Ունայն քամին դուռս է ծեծում
Դալուկ ձեռքով կմախքի.—
— «ի՛լ, դուռդ բաց, դուր ես հեծում,
Տերն է եկել աշխարքի:

Տերեվներդ, կանդնի՛ր, թափ տամ՝
Կյանքիդ աշունն է հիմի՛:
Երազներդ ցրվեմ, երթամ,—
Այս է ուղին ամենի...»

1907 - Դադարապատ



Ջմբուխոյա երգեր, երազներ չքեզ;
Գարնան վարդի հետ եկան, գնացին.
Համբույը ծաղկաբույը և սեր հրաշագեն,
Գարնան հովի հետ եկան, գնացին:

Ուրիշի նման բույն չըշինեցիր,
Կյանքի մըըկով զարկըլած թռչուն,
Ու հիմա մենակ ու որբ մնացիր,
Եվ թարմ տարիներդ եկան, գնացին:

Անտոն մնացիր ու թափառական,
Ընկեր, բարեկամ եկան, գնացին,
Մոլոր ճամբեքում մնացիր մոլոր,
Քարավան, երամ եկան, գնացին:

Ու հիմա աշնան մեղի մեջ խալատ
Ականջըդ հառած որտիդ լուռ լացին.
Օտար ափերում կանգնել ես շվար,
Ինչ վոր ունեիր, անդարձ գնացին...

1904

Երաղիս մեջ ծովը տեսա,
Ծովը լազո՛ւր ու անդո՛րը.
Մենակ, մենակ, ափի վրա
Բնկած էի վիրավոր...

Յովն էր հեղում մեղմ ու թալուկ՝
Մտորմունքի մեջ անծայր:
Եվ խոստում էր վերքը խորունկ,
Խոկ ես՝ անհույս, ես՝ անծար:

Եվ հոգիս մեջ մի ձայն ծորեց,
Մի ձայն՝ քնքուշ, սուրբ սրտից.—
Այս, այն մայրս էր, կանչում էր ինձ
Հայրենիքիս ափերից...

1898



Կյանքի կովում ամենքը դեմ ամենքին՝
Սուրբ են սըրում ամենքը դեմ ամենքին:
Սուրն իմ ձեռքից՝ կովի հանած ընկալ
վար,
Ես | չեմ կարող մտնել սլայքար անարդար—
Խել բերնից արնոտ հացը աղքատի,
Վառ քրտինքը ծըծել տանջված ճակատի...

Սուրն իմ ձեռքից՝ կըովի հանած ընկալ վար,
Ես չեմ կարող մըտնել սլայքար ինձ
համար...

1905

Եվ անապատից, հեռո՞ւ ծովերից
Եվ դարբասներից, թե խուլ բանտերից
Լըսում եմ անվե'րջ, գիշեր ու ցերեկ
Ողբ ու հեծեծանք մի՛շտ ամենուրեք.
Տեսնում եմ արցունք ժըպտի հետ հյուսված,
Հացի հետ արյուն—վի՛շտ համառարած..
Եվ ծովարցունքներն անծայր աշխարհի
Ամեն խորշերից, ամեն սըրտերից
Կաթիլ ու կաթիլ հավաքվում, գալիս,
Թափիլում են վըշտոտ, խոցված սրտիս
մեջ...

1905



Հիմա հեռավոր, վեհ Հիմալայան
Այն երկնասըլաց, վես բարձունքներում,
Հալսուռըն, ինչպես ալեկոծ օվկիան,
Հոծ, սոսկավիթխար ամպերն են եռում;

Եվ մըրըրկահույզ ամպրոսն է ուայթում
Ժայռերին խոժոռ, ահեղաղղորդ,
Բուռըն, խոլական կայծակն է ճայթում.
— Եվ Հիմալայը կանգնած է խրոխտ...

Եվ ուայքարի մեջ այդ որոտընդուռ
Այնտեղ է այժմ և հողիս ըմբռուս...

1905

Ո՞ւմ սիրտն է հեծում մըռայլ գիշերին
Զըմբան հողմերից ծեծվա՛ծ, տառապա՛ծ .—
Այս գայլն է թըշվառ՝ լեռան լանջերին
Դառըն հեծեծում ցըրտահա՛ր, քաղցա՛ծ . . .

Մենակո՛ր, խըղճո՛ւկ, դու վիրավոր սիրտ,
Ես է՛լ քեզ նման մենակ եմ ու խե՛ղճ,
Մարդն էլ քեզ պես է, ո՛վ խոշտանգած
սի՛րտ,
Այս ցալի, մահի սև աշխարհի մեջ:

Այս ցալի, մահի դաժան աշխարհում
Մեր բախտը մեկ է՝ անհույս ու թըշվառ,
Իմ սիրտն էլ քեզ հետ կյանքն է անիծում,
Արլ', լանք մեկտեղ, իմ խե՛ղճ դայլ—
Էղբայր . . .

1907—Երևան



Լեռների լանջում, ծանըր հողի տակ
Ես թաղված է՛մ մեռա՛ծ, մոռացվա՛ծ.
Ու վաղո՛ւց, վաղո՛ւց անհա՛յտ, լո՛ւռ,
մենա՛կ,
Ես նընջում էի հոգուս մեջ սուզլած:
Եվ հանկարծ մի օր լսեցի հեռվից
Մարտահրավերը վեհ աղատության,
Բմբոստ ամբոխի ձայնը մըրկալից,
Երդե՛ր մարտական, չեփո՛ր ռազմական,
Վառ դրոշակի խրոխոտ ծածանում,
Զենքի շառաչյո՛ւն, ձիերի դոփյուն,
Քայլե՛ր առնական,
Հողիս մոտեցան,

Եվ գողաց ահա՛,

Եվ թեթեվացալ

Հողը իմ վրա.

Եվ սիրտս լըցվեց այրվող արյունով,

Ուզեցի ելնել, նժույգն ամեհի

Խըթանե՛լ, թըռնե՛լ շառաչե՛լ դենքով,

Կըռվե՛լ ու մեռնե՛լ դաշտերում սաղմի... .

1906—Կարս



Դո՛ւ անցորդի սկես քեզ միայն ըզդա՛,

Եվ որպես ճամբորդ այս երկրի վըրա.

Ազա՛տ հայացքով նայի՛ր ամենին.

Եվ անվերջ քայլեր քո անհայտ ուղին:

Սիրտը սրբազան վըշտով թաթախի՛ր,

Հեռավոր ափեր դընա՛, թափառի՛ր.

Անհագ որոնի՛ր մի վեհ ընկերի,

Սիրիր, բայց սիրուն մի՛ լինիր գերի.

Սիրի՛ր, բայց և թո՛ղ, և նորից դընա՛

Ազատ ու մենակ՝—աշխարհիս վըրա:

Եվ երազ մի վա՛ռ, չքեղ, սուրբ և վեհ

Այս հողի-երկրից հոգիու թըռցնե.—

Կարոտով ձըդտիր աստղերին անշեղ

Եվ մեռի՛ր աստղե-ոլորտների մեջ...

1904



Անապատում, միրաժի մեջ մի բեղվին

Շողքն է տեսել մի աղջըկա գեղեցիկ,

Եվ վընտում է հոգեսըլա՛ց, տենչագին

Ծով-կարոտով ա՛յն աղջկան գեղեցիկ:

Եվ ծարավուտ անապատում հըրավառ,
Տատասկներում, ալեվի տակ բոցափայլ
Փնտուռմ է նա՛ նրան անվե՛րջ, անդագա՛ր
Եվ մեսնում է վեհ սիրո մեջ հոգեղմայլ:

Եվ քընի մեջ—աննյութական, անվախճան,
Տեսնում է նա այնպե՛ս քնքո՛ւշ ու սիրուն
Շողքը չըքնաղ տյն նազելի աղջըկան
Եվ փընտուռմ է նրան հավերժ երազում...
1904



Չայնըս հնչում է խավարի խորքից,—
Գըթա՛, հայտնվի՛ր, սո՛ւրբ ճշմարտություն.
Ես քեզ եմ վնասուել իմ կյանքի շեմքից,
Եվ տե՛ս, քարացա անհուն տանջանքում:

Բյուր ուղիներով ես դիմեցի քեզ,
Քո հետքն ու շուքը նույնիսկ չը գըտա.
Տե՛ս, սըտության մեջ, մոլորության մեջ
Զախջախվեց կյանքը... ու դու չե՞ս
դըթա...
...

Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ,
Բայց հավատում եմ—ունիս դոյցություն.
Բայց էլ չը մնաց մի ուղի անհայտ.—
Ա՛խ, երեվացի՛ր, մեծ ճշմարտություն...

Եվ ես ուժ կառնիմ, կը գոտեպընդվիմ,
Ցուղըս կը վերցնեմ և ձամբա կերթամ,
Լույսը կավետեմ խավար աշխարհին,
Մոլոր մարդկության վեհ կյանքը
1900-Յուրիի կըտամ...

Անմահ արելի վառ գդվանքի տակ
Փոլած հոլանի՝ ծովն է շողշողում.
Լեռների գլխին բյուրեղյա պսակ,
Շուրջը ամպերի երամն է լողում:

Ու կռունկների քարվանը նորից
Անուշ կարկաջով գարունն է բերում.
Զերմ չունչն է ելնում տա՞ք, փխրուն հողից,
Ժայռի ծերպերից մեխակն է բուրում:

Եվ զողանջում է անտառը դալար,
Քաղցր դայլայլում թփից մի թռչուն. —
Սիրտս ցնծում է, հազար ու հազար
Երգով ու չողքով գարնան դեմ թռչում:

Թռչում եմ արագ թեթեվ հովի հետ,
Հզոր կաղնու մեջ աճում եմ հազարտ.
Ծաղկի, եղնիկի, թիթեռնիկի հետ
Ծաղկում եմ, չնչում, ոստոստում աղատ:

Ծովն է սրտիս մեջ ծփում երազով,
Զգում եմ ես ինձ առյի, ժայռի հետ.
Տիեղերքը մեծ լցում է ինձնով,
Մեկ եմ զգում ինձ երկրի, երկնի հետ:

Անհուն հիացքով սիրալս է զարկում,
Խորին ցնծությամբ ողջունում եմ ես
Եվ օրհներգում եմ և զրկախառնվում
Մեծ և անսահման բնությանն հայերժ...



†

Անհուն վրեմի և ատելության
 Դըժոխքն է այրում թունոտ իմ հոդին.
 Եվ ես չեմ բերում խոսքը հաշտության,
 Որ ծանր է նստում զրկվածի ուսին:
 Անհուն վրեմի և ատելության
 Պատղամն եմ վասում ես ձեր ուրբանքում.
 Եվ ձեզ ասում եմ՝ ով դու ցնցոտի,
 Դու, որ թշվառ ես, անսուն անոթի,
 Դու, որ քո ձեռքին կռել ես շղթա,
 Դու, որ քրտինքդ՝ դառն ծովացած
 Նզովք ես շինել, և լուծ քո վրա—
 Ես քո ժանիքը սրում եմ հիմա:

Կանդնեցընում եմ բաղուկը ահա,
 Ինչպես ոխակալ օձն անապատի,
 Եվ քո քարացած բըսունցքում հիմա
 Ես սուրն եմ դնում ահեղ ճըշմարտի:

Եվ քո սրտի մեջ վառում եմ ահա
 Հուրն ազատության և իրանունքի—
 Կանդնեցընում եմ բաղուկը ահա',
 Ինչպես ոխակալ օձն անապատի...

1905

Ա՛խ, երանի չըծնվեի,
Չըլսեի
Հովիվների երգերը ջինջ
Եվ մայրական խոսքերը սուրբ:
Չըտեսնեի
Չքնաղ դեմքը իմ տիրուհու
Եվ աշխարհքը հրաշագեղ:
Ա՛խ, երանի չըծնվեի,
Չըլսեի, չը տեսնեի—
Չըմեռնեի...

1935



Օրերն հալվում են օրերի նման,
Եվ ամեն վայրկյան մեռնում է ներկան.
Ապրած օրերը— սուզիող քարավան
Անհունության մեջ հավիտենական:

Ոսկի մանկության ոսկի հեքիաթով
Մի վառ աշխարհ կար՝ չքե՞ղ, դյութակա՞ն.
Մարհց, չքացավ երազն հոգեթով
Ոչնչության մեջ հավիտենական:

Արելն հոգուս մեջ՝ մի բուռըն աճյուն
Եվ լալով կյանքը՝ չընչին և ունայն,
Գնում եմ ահա սրտաբեկ հանդչում
Փոշիների մեջ հավիտենական...

1916 - Ժընե

Եղբայրության կամ թե սիրո
իսոքը ես ձեզ չեմ ավետում, —
Պատգամները չարի, բարվո
Զեր ոտների տակն եմ նետում:

Կյանքն է սլայքա'ր՝ դու ու դաժան'ն,
Ճզմի'ր մարդուն և թռի'ր վե'ր.
Իրավունքը ուժն է միայն,
Վա՛յ հաղթվածին, հազա'ր վայեր:
Տեր կամ ըստրուկ պիտի լինիս, —
Ճշմարտություն չըկա ուրիշ:

Զես սպանի, քեզ կսպանեն,
Դու սպանի'ր, քեզ չսպանեն:
Լուծ կամ լծկան պիտի լինիս, —
Ճշմարտություն չըկա ուրիշ:

Անիծվիս, մա'րդ, որ հույսով է մարդ.
Բախտը կովով կոփի'ր ինքըդ:
Մո'ւրճ կամ ղնղա'ն պիտի լինիս. —
Ճշմարտություն չըկա ուրիշ:
1905—Արեսանդրապուր



Ո՞ւմ հետ եմ անհույս
Լալիս, հառաջում,
Ո՞ւմ ճակակի վըլա
Իմ ձեռքն է հանգչում:

Աշխարհն՝ հայիսյան
Մահվան բերանում,
Եվ մահը նրան
Մամում է, ծամում:

Լալիս է աշխարհն
իմ սիրող գրկում.
Համայն աշխարհի
Բախտն եմ ես սգում:

1911—Թիֆլիս



Թռչուններն ուրախ՝
Նորեկ գարունքին
Սիրով, սրտադին,
Խոսում են կրկին:

Ա՛լս, կար ժամանակ,
Ես ա՛յնպես ներհուն
Իմանում էի
Հավքերի լեզուն:

Բայց սին ու դժնյա
Խաղերից կյանքիս
Օրօրի վրա
Ծանրացավ հոգիս:

Եվ հիմա նրանց
Լեզուն իմաստուն,
Լեզուն երազի,
Եւ չեմ հասկանում . . .

1919—Ժընե

Ո՞չ իշխանություն, ո՞չ կռիվ, ո՞չ կին
Չեն հափշտուկում հիմանդ իմ հողին:
Դողմանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Ճրապույրներով դյութում իմ հողին
Թափառումների տենչով անմելին...

1908



Ծաղկունքը դարնան
Սրտիս սեր բերին:

Ծաղկունքը դարնան
Սիրուս հետ թոշնան:

Ու շիրմիս վըսեն
Կը բացվին նորին

Ծաղկունքը դարնան . . .
1912—Տուրիս



Աշուն է, քամի . . .
Տերելներն միմի,
Արցունքի նման
Դողացին, ընկան . . .

Փչում է, առես,
Ունայնության պես,
Քամին ամեհի
Ճամբում ամայի:

Ամքել է հողիս
Մռայլ գիշերիս, —
Չդժում մահից,
Թե՞ կանքի ահից . . .

Եվ դեղին վոչին
Ենում է խմ հին
Ապրած օրերից,
Եվ ծածկում է ինձ . . .
1913 - Փրհի



Առավոտ սպահին
Դալար դաշտերում
Իմ մանկանո հետ
Պառւյտ եմ տնում :

Ծաղիկների հետ
Խոսում է տղաս, —
Որոնց հետ ես էլ
Զբույց եմ տրած :

Վայրիյանը՝ ծանր,
Օրերը՝ թեթև,
Տարիներն անցան
Իրարու ետև:

Ու աշխարհն աչքիս
Դառնում է երազ.
Երեկ ես էի,
Այսօր՝ երեխաս :

Եվլ վաղը ասես,
Մի աչք մթաղնած
Լուռ գերեզմանից
Հառել է վրաս...
1914—Ժընկ



Գետակի վրա
Թեքվել է ուռին.
Ու նայում է լուռ
Վաղող ջրերին:—

• • • Երազ-աշխարհում
Ամեն բան հայկատ
Գալիս է, գնում
Ու ցնդում անհետ:

Եվլ գլուխը կախ՝
Նա լաց է լինում.—
Զրերը ուրախ՝
Գալիս են, գնում...
1916—Ժընկ



Կը տեսնեմ ահա,—լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր օճախեն.
Եվլ ուռիներս մարմանդ կօրորվին,
Ծղրեղը կերպե անտես խորչեն...
1916—Ժընկ

Մեղմ ճրադի տակ նստել է տիսուր
Ծերունի մայրս՝ մանկիկս դրկին.—

Մուշ-մուշ քնել է մանկիկս՝ անդորր.
Ու աղոթք կահե մայրիկս՝ լոին. —

«Ամենին առաջ թո՛ղ ինքը հասնի
Ամեն հիվանդի, հեռո՛ւ ճամբորդի.
Ամենին հետո թո՛ղ ինքը հասնի
Քե՛զ, իմ լոելց որդի՛, իմ պահպուխտ
որդի՛» :

Անո՞ւշ ծուխի կելնի իմ հոր օհախին,
Մայրս կաղոթի՝ մանկիկս դրկին.
Ծղրիդը կերգե անտես խորչերին
Եվ ուռիներս մարմանդ կօրովդին...
1911—Կ. Պոլիս



Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին.
Մանուկ ականջիս բարձըր կը կահչեր, —
«Դուրս արի խաղանք, ծաղիկ եմ բերել» :

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջներ մեր ծառին.
Պատահի սրտիս բարձըր կը կահչեր, —
«Դուրս արի՝ թռչինք, երազ եմ բերել» :

Ամեն գարունքին՝
Արագիլն ուրախ կիջնի մեր ծառին.
Ու նորեն կերթու, ու նորեն կուղա,
Բայց, ա՛խ, ինձ համար էլ երազ չկա...
1911—Իգմիկ

Սիրուն մանկի'կ, ես գնում եմ, դու դալիս ես այս
աշխարհ։
Ճշմարիտն ես փորձով գիտեմ ու խռոքերս մի՛ մոռնար:
Կյանքն է ամպի վախչող ստվեր, վայրկյանն է միշտ
իրական։
Բախտի կուանը կտմքն է թեհ, բայց դեպվածն է
տիրական։

Զգացմունքն է գերիշխանը, լսելը՝ նրա լոկ ծառան։
Բայց զո՞ւ խելքով վլադ պահի'ր, ինչպես պողպատ
կուռ վահաճն։
Մի՛ հավատար ստվերներին, հենվի՛լ միայն քեզ վրա,
Առելու չափ սի՛րիր մարդկանց, բայց լավություն
միշտ արա։

Եվ լայն օրում թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ
ճանաչի՛ր.
Խոկ նեղ օրում ընկերների ո՛չ որոնիր, ոչ կանչիր։
Կյաղերով լիայս աշխարհում խաղդեթե տանուլ տառ,
Զվարթ եղի՛ր, ու այդպիսով բախտի վրա կը խնդառ։

Այսպախ ու վեհ զեկու վարե անձանոթին դեմուլիմի։
Անդզալի տուած գնա՛, ինչ որ լինի՛, թող լինի։
Լսի՛ր, տղա՛ս, ինձ կթաղես անհայտ մի տեղ, անհշան,
Որ չխանան, մարդիկ չգահ՝ չերմիս քարը դողանան։

Մեղեղիներով դարունն է փթթել,
Անհուն հայացքով ժպտում է արել.
Կարծես՝ դաշտերը թուղպը չի պատել,
Զի կախվել ծառից մահաղույն տերեւլ:

Պառկել է մեջքին ծովը անդորրիկ,
Լայն-լայն բացել է աչքերը ծովի,
Կարծես՝ չի պայթել այնտեղ վորթորիկ,
Եվ հետքն իսկ չը կա բեկլած մի նավի:

Մանուկներն ուրախ՝ դաշտ մարզերում
Երգում են պարում՝ գիրկ գրկի վարած.
Կարծես՝ աշխարհում չի թափվել արյուն,
Զի եղել երբեք լաց ու կոտորած...
1922—Վեհափոխիկ



Հարեվանիս որդին մեռավ,
Քսան տարու տղա.
Նոր էր ինձնից գիրք վորս առավ,
Առույգ, առողջ տղա:

Բիլ գիշեր է գարնաճային՝
Լուսնով, բույրով օծուն.
Կրթնել եմ ես պատշգամին՝
Միտքս ցալով խոցուն:

Աչքս եմ հառել պատուհանին
Մահով մթնած խուցի.
Մոմն է վառվում լուռ սնարին,
Դաւլուկ, առանց բոցի:

Եվ դիտում եմ, անհագ դիտում
Շուրջս լցված մահով.
Զարհութանքն է հոգիս պատում
Անեռթյան ահով:

Եվ աշխարհն է մեռել դառնում
Ըսկած սրտիս վըրա.
Եվ լուսինը—զալուկ մի մոմ
Լուռ սնարին նրա:
1912—Վենետիկ



ՈԱԿԵՆԵԱՅՈՒՄ

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել աղամանդին,
Ու անցել:

Մոհակումաղ սերունդների
Աչքն է դիակել լույս գաղտթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեղ ձակատին,
Ու անցիր...

1926 Բայինաս

Հայրենիքից հեռու, մի օր,
Եթե մահը դարձել լնձ,
Միհնույն է՝ թաղվամ ուր որ,—
Մեր մոր դրկումն եմ նորից:

Սակայն, քաղցր է ննջել դաշտում,
Խնձորենու չուքի տակ,
Որ գարունքին շիրմիս ծուփ զան
Ծաղիկները սպիտակ:

Ել ամառը՝ աղջիկները
Վրասր կանգնեն երգելավ.
Քաղեն, լեցնեն գոգն ու ծոցը
Կարմիր, կարմիր խճճորով:

Ել աշունքին՝ սիրուս նման
Մեռած, լացած մի երազ՝
Տերելիները դալուկ, դեղին,
Իջնեն, մեռնին իմ վերաս:

Երբ ձմեռ դա՝ լոիլ ու հեղ՝
Բյուրեղները ճյուղերեն
Շիրմիս կաթեն արցունքի պես
Մենության մեջ ձյունեղեն:

1918—Ժնե

Հայրենի հողի վրա եմ նորից,
Նորից մանկական աչքով աւսնում ե՞՛
Հավերժից դիտող աստղերն հրեղեն,
Հրաշք է դառնում աշխարհն ինձ նորից:

Ուրախ քրքիջով վազում է կայտառ
Իմ հին խաղընկեր դեաակը փայլուն,
Տեսնում եմ նրա զմբուխա հայելում
Ծաղկի պես ցնծուն՝ պատկերս պայծառ:

Կուզեի նստել այս սուրբ ծխի տակ
Երգում է ծառից մի հաղք սրտագոհ.
Տեսնում եմ՝ հայրս բարի, մտախոհ,
Ծահոթ շալիղով քայլում է դանդաղ:

Ինձ տուն է կանչում ձայնը մայրենի,
Խաղըս թողնում եմ. երեկո է ուշ.
Գզմում է մայրս ժպտում է քնքուշ,
Մի արելի պես, որ նման չունի:

Վառվել է նորից օճախն հինալուրց,
Ելնում է ծուխը անուշ խընկի պես,
Խոսում են մերոնք... բայց ննջում եմ ես,
Հոգիս պարուբած հեքիաթ ու անուրջ:

Ո՛չինչ չեմ տենչում այս ծխից ավել,
Ո՛չինչ, դատարկված այս մեկ աշխարհում.
Ո՛չ կին երազած, պանծալի անուն,
Ո՛չ դանձ աշխարհի—այս ծուխից ավել:

Կուզել նստել այս սուրբ ծխի տակ
Ու տեսնել նորից հոգով մանկական
Հարապատներս , որ հիմա չկան .
Եվ հրաշք նորից—աշխարհ բովանդակ . . .

1926 – Երեան



Երկու մանուկ՝ տղա-աղջիկ ,
Խաղում էին դաշտերում :
Երկու ընկեր՝ տղա-աղջիկ՝
Դպրոց էին ըշտապում :

Երկու սրտեր հանդիպեցին
Շշուկի մեջ ծառուղու .
Երաղեցին և թախծեցին ,
Եվ սիրեցին իրարու :

Երկու շիրիմ իրար մոտիկ
Նոճիների ստվերում :
Երկու մանուկ՝ տղա-աղջիկ ,
Խաղ են անում դաշտերում . . .

1929 – Երեան



Երաղիս տեսա , որ մայրս՝ թշվառ ,
Շեն պատերի տակ , մեծ վաղոցներում ,
Այնպես դողովուն , հիմանդ ու անձար ,
Անց ու դարձողին ձեռն էր կարկառում :

Երաղիս տեսա որ իմ մայրը՝ ծեր ,
Յնցոտիներով պատած մուրացկան ,

Եվ մարդիկ՝ անգութ, անտարբեր, անսեր,
Զբոսնում էին և հրում նրան:

Եվ երազիս մեջ ես դառըն լացի,
Ռւ ցավից զարթնած՝ լաց եղա անքուն.—
Ա՛խ, ո՞րքան մայրեր՝ խեղճ, առանց հացի,
Մեր շուրջն են դողում ու մենք չենք դդում...
1908.-Թիգրիս



ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

Նվեր մեր ժողովրդական վեպի
«Սասունցի Դավիթ»-ի հազարամյակին:

I

Մեր հոյակատ հին վանքերի մուլթ խուցերում,
մենության մեջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով
անշեց,
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն
անքուն,

Պատմությունը մեր դրեցին մատաղաթի վըրա
դժույն—

Եղեռնները, նախճիրները հորդաների արյունը ուռուչտ,
Փլաւումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշտ:
Եվ ողբացին լալահառաչ դշինմ բախտը հայտառանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծո
դատաստանի:

II

Մեր դեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օճախի
շուրջը նստած՝

Գուսանները մեր խանդալից, առջևները դինի և հաց,
Վիպերգեցին հաղթանակը դյուցազների մեր մեծազոր
Եվ ծաղրեցին սլարտությունը ոսոխների մեր

բյուրավոր:

Եվ հյուսեցին սլատմությունը հաղերժացող
Ժողովուրդի,
Վաս հավասով փառքերը մեր ավանդեցին որդոց
որդի.

Տեսան չքեզ մեր ապագան, անընկճելի աղատ սղին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած
Թուր կայծակին:

1939—Ծաղկաձոր



Վերջալույսին սոկէշող,
Դաշտերում ծաղկած
Շըջում էի մենասլոր,
Հողիս անդորրած:

Մոսացված մի երդ հին
Լսեցի հանկարծ,
Այնքան, այնքան մտերիմ
Սիրած ու ապրած:

Աղջիկ, տղա՝ թե թե՝
Անցան ծաղկաղարդ,
Ամբողջ սլացք, ահնչ ու բոց,
Երդելով զվարթ:

Այդ երդը, սիրո, դիտես դու,
Երգել եմ և ես,

Երբ որ պատահի էի՝
Հրտվառ ու վես:

Վերաբարձրն հողուս մեջ
Սիրելի դեմքեր
Այս աշխարհից հեռացած
Եվ մեռած սերեր:

Մինչեւ խորին ուշ դիշեր
Դաշտերում թափուր
Ուրուների հետ անթիվ
Շրջում ևմ ախուր . . .
1933—Փարիզ



ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Հուրհում էր արեն ուրախ,
Գետն էր գնում քաղցրակարկաչ.
Չորս դիմ՝ գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ:

Արաւյտն երգով ձախրում էր վեր.
Արուներում՝ խրխինջ ու կանչ.
Չորս դիմ՝ գարնան կանանչ թիվեր,
Կանանչ հովեր, ծովեր կանանչ:

Մեր մանկական ճիշն էր թնդում
Դաշտերի մեջ ցողաթաթախ.
Խայտում էինք զմբուխտ գետում,—
Եվ դնդում էր արեն ուրախ . . .

1930—Փարիզ

Փրկուր բաշերով ծովը ամեհի
Ծեծում է ժեռուտ ալիւրն ամայի:

Ինձ համար չկա այլևս գաղտնի, —
Եվ աշխարհն անհուն՝ նպատակ չունի:

Կովում է սիրով ամեն մի վայրկյան
Դաժան կամքի դեմ ահեղ բնության:

Ողջը երազ է, ողջը՝ ներապրում,
Եվ աշխարհն իրոք չունի դոյություն:
Ես միայն—ես կամ, և ուրիշ ոչոք,
Երջանկությունը ակնթարթ է լոկ:

Եվ աշնան հողմը իմ գլուխի վրա
Թող հիմա վայրագ շաշե ու ոռնու...
1912—Պինկիս



Կեռասենին ծաղկեց կրկին,
Ծալալիեց բույր ու գեփյուռ.
Բլրուլն երգեց վարդի գրկին,
Կարկաջեցին ակն-աղբյուր:

Իր լարն ունի թումի ու թռչուն,
Ամեն մի ծիլ ու ծաղիկ,
Բյուր-բյուր լարով գարնան լեզուն
Նորից խոսեց գեղեցիկ:

Եմ լսում իմ ու հայատում
Նորից գարնան հեքիաթին.
— Ո՞վ էր՝ հնչեց իմ հին արտօն
Սիրով զմբուխտ մեղեղին...
1914—Բաղել

Վատարված եմ ևս
Հայրենի երկրից.
Մի անհայտ ուղի
Լուռ տանում է ինձ:

Ո՞ւր եմ գնում ևս,
Ո՞ւր պիտի հանդէխմ,
Ո՞ւր պիտի լինի
Կայսերը վերջին:

Զյունի եկալ, ծածկեց
Ռւղի ու կածան.
Որոնց սիրել եմ,
Ինձ օտար դարձան:

Այս, չար բախտիս դեմ
Իմ խալար հեռվում
Մի աղոտ ճըրադ
Արդյոք չի վառվում:

Վայում է քամին,
Խիստ բուք է հիմի.
Թող իմ թշնամին
Անտուն չըլինի...
1910 — Հասան-Դալա



Բախտը ինձնից թըրավ, զնաց
Վերջալույսի շողերի պես.
Հույսը միայն մոտըս մնաց,
Մոտըս մնաց անուշ մոր պես:

Եկեք, վասլեք դաշտ ու հովիտ.
Արշալույսի վառ ճաճանչներ.
Հարցնեմ՝ ասեք, — Ո՞ւր էն, չըկան
Մեր ընկերներ ու ճաճանչներ:

Ո՞ւր զնացիք, օրեր չքեղ,
Մեր ու խնդում, երգ ու երազ.
Արդ, մահն է իր նետերն ահեղ
Մժեն կողմից լարել վերաս:

Ո՞ւր զնացիք աշնան քամու,
Բերանն ընկած տերեկի պես.
Մի՞թե նորից չեք դասնալու
Գարնան դլարթ ջրերի պես:
1912—Յուրիիս



Շատ մի տխրիր, շատ մի խնդար, սիրելիս,
— Այս աշխարհում և ոչ մի բան հիմք չունի.
Վաղանցուկ են, կան ու չկան, սիրելիս,
Բոլոր իրերն ու աստղերը անհունի:

Լայնսիրտ եղիր, ողջը երազ համարե,
— Այս աշխարհում և ոչ մի բան միտք չունի.
Լացը՝ ժըսիս ու սերը՝ ցալ համարե,
Ծե որ ասլիս, կյանքը ինչո՞ւ համար է:

Ախ, մի տխրիր, վիշտը կանցնի — այդ ոչինչ,
— Այս աշխարհում և ոչ մի բան դին չունի.
Շատ մի հրձվիր, սերն էլ կանցնի, բայց ոչինչ,
Կյանքն էլ կանցնի, — այդ որ ոչինչ ու ոչինչ:

Լաց, իմ նազելիս, լաց դառն ու անհուն,
Աշխարհէ վերքին չըկա զեղպարման.
Ի՞նչ է մեր կյանքը—լաց մի փայլիլուն՝
Հողմերի տոշե ահեղ բնության:

Եվ սեր ու երդեր, և վասք ու հանձար
Աին պատրամնքներ են մահը մոռնալու՝
Եվ մարդը՝ դժբախտ, անզոր ու անձար՝
Ծնված է մահին պատառ դառնալու:

Հայլիսենական, անծիր, անսահման
Խովարների մեջ, կյանք, դու ես մի լույս,
Որ մի պահ չողաս, մարիս հայլիսյան,—
Լաց, իմ նազելիս, լաց դառն ու անհույս:

Իմ սիրտը նման բացված խոր վերքի,
Որ տիեզերական կոկիծն է լալիս.
Լալիս է դարեր առանց արցունքի,—
Այս, հետ գլուխըդ դիր վշտոտ կըծքիս:

Դիր անհույս սրտիս գլուխըդ ու լաց,
Ամենքի բախտը լաց, իմ նազելիս.
Լաց,—և արցունքդ դեռ չցամաքած՝
Դուռդ կըբաղին մահը, նազելիս...

Նղբորս ուղու⁴
Խամհակ Խամհակյանի
նիւատակին

1

Շառիս վրա մի դորշ թռչուն՝
Կտուցն առած թեկ տակ՝
Կուչ է եկել ու հառաջում,
Այսպես տխուր ու անհույս,
Ասես՝ առել բերել է ինձ
Վերջին խոսքը սիրելուս...

Ու լսում եմ խոսքը արտում,
Սըսիցս արյուն է կաթում...

2

Միշտ երկրե երկիր,
Ինձանից հեռու,
Թափառում էիր,
Երբ ողջ էիր դու:

Բայց մոտը եկար
Քո մեռած օրեկդ.
Հիմա անլսոժան
Շրջում ես ինձ հետ:
Հեռու անտառում ծաղկում է հողարտ.
Յնձում է զիարթ այն կաղնին հիմա,
Որ ողիսի դառնար զարդարը մի օր:
Եվ մահը մոտ է, մոտիկ է այնքան,
Որ ամեն անգամ հոգուս ականջով
Լսում եմ կաղնու սոսավյունը խոր...

1929—Երևան



Մաղում է առձրկ,

Սրտամաշ, տրտում,

Անձրկ ու անձրկ,

Դանդաղ, անդաղըսում :

Ա՛խ, հիմի, հիմի
ի՞նչ ցուրտ է ու թաց
Մութում քո շերմի,
իմ սրտիս սիրած :

Հոգուս մեջ դարձար
Դու մի այրող վերք,
Ես քեզ մոռանալ
Զեմ կարող երբեք :

Ու աշնան մեղում
Կանգնել եմ անհույս,
Անհույս հեկեկում
Անունըլ անուշ :

Աչքս ճամբիդ ծովացած՝
Կարոտդ սիրտս էր այրում,
Այցի եկար դու հանկարծ
Ինձ այս օտար աշխարհում .

Դեմքդ քնքուշ ժպիտով,
Ինչպես մանուկ երեկվա,
Գիրկս ընկար կարոտով,
Իմ անուշիկ երեխա :

Այդ ինչքա՞ն ես մեծացել,
Պարթևական ի՞նչ հասակ,
ի՞նչ չքեզ ես, դեղեցիկ,
Պարհան կահաչ արեգակ:

Հաղթանակից ես եկել,
Ուկեղբահ, քաջաձի,
Ա՛խ, քեզ շատ եմ կարողել,
Մոտա մնաւ, մի՛ դարձի:

Առ' է, հոգիս, թի հիմի
Մարմարէ ձյունն է ծածկում
Հողաթումը քո շիրմի.—
Դու իմ մոտա ես, իմ դրկում:

Ճակախիլ վրա տառի պես
Պստիկ, սպատիկ մի վերք կտ.
Թոր' զամբուրեմ՝ լավանա,
Դու, իմ կտրիճ երեխա...

1916



ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԴ

... Եվ ես առատում ե. անսովոտում
Լուռ թափառում եմ հոգիս ծանրացած
Անլույծ խոհերով, վշառվ անսովում
Եվ տեհնչանեղներով տիեզերատարած:
Եվ հանկարծորեն՝ պարզ ու անհսկմ,
Ես խակ զգում եմ, տեսնում եմ ահա,—
Տիեզերքը ողջ—մի մեծ, անհուն զանդ,
Եվ հոգիս—նրա լեզվակը վսիմ:

Եվլ հրաշքներով, վեհ լոռության մեջ
Տիեզերքն անծիր՝ զսղանջում է խոր
Երդն անհունության, և հավերժության,
Եվլ ճշմարտության, և գեղեցկության:
Եվլ զողանջում է տիեզերքն ամեն—
Եվլ իմ հոգումն է, իմ ողին է այն,
Որ զողանջում է—ես մարդարե եմ...
Եվլ տհու այնտեղ ամբոխն է ծփում
Ծանր ու թանձր՝ օվկիանի նման.
Եվլ գորչ, հարթ է նա—զանդված մի հսկա:
Եվլ հոգուս խորքից բարբառ եմ լսում—
Դողանջը զանդի տիեզերական:

Եվլ գեղի ամբոխն իջնում եմ ահա
Նոր կտակներով, նոր պատզամներով.
Դեղ նրա հոգին զահալիժում եմ՝
Նրան խայթելու, և քարոզելու,
Եվլ արտասովելու, և այլըլիլու...

1899—Ալեքսանդրապոլ



Ես ձեզ ասում եմ՝ կըդա ոգու սով,
Եվլ զուք կըքաղցեք ճոխ սեղանի մսա,
Կընկնենք մուրալու հարբած որկորով՝
Հըրեղին խոսքի, վեհ խոսքի կարոտ:

Լըրենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ զեղմունք—միտք ու երազանք,
Նյութի տաճարում արբած սլարեցիք՝
Մոռացած անմահ, անհունի տեհչանք:

Դուք, որ հեղնեցիք ուժն ստեղծագործ՝
Զեր նյութի հանդեպ կըդա ոգու սով.
Եվ մուրացկի պես փշրանքի համար
Ծարավ ու նոթի կանցնեք ծովե ծով...
1903 Բագու



Երկինք հիասքանչ, չքեղ, լուսալից,
Հոգիս արթնացուց լըռության երդով,
Եվ այս տաղմուկից, կյանքի անձուկից
Թափի առավ հոգիս երազ-թեվերով:

Եվ տիեզերական խորությունների
Անձառ վայրերում հոգիս սալառնեց.
Եվ խորախորհուրդ, վեհ գաղտնիքների
Անխոս բարբառին լուռ ունկընդրեց:

Եվ տեսավ նրա ափերը անծիր,
Անսահմանության սարսափն ահավոր,
Աստղի քարվաններ, բույլեր ցանուցիր,
Ուժերի հախուռն հորձանքը հըզոր:

Եվ երկյուղագին հոգիս հաղորդվեց
Հավիտենության խոհերին վըսեմ,
Անմահ էության հարլեց ու ձուլվեց,
Ինչպես մի հընչյուն, հյուլե մի նըսեմ...
1904—Թիֆլիս



Հոգիս մոայլ էր մըրբկի նըման,
Եվ ծանր էր վիշտըս, և ես քուն մտա,
Ինձ տանում էին դեսպի կախաղան:
Եվ խոժոռ ճակտիս պոակ տատակյա:

Եվ խոսքըս մուրճ էր, և խոսքըս՝ հըրդեհ,
Ես փշրում էի սըրտերը մարդկանց.
Եվ խոսքըս մուրճ էր, և խոսքըս՝ հըրդեհ,
Ես այրում էի սըրտերը մարդկանց:

Ինձ տանում էին դեպի կախաղան,
Սըլինների տակ զինավառ զորքի.
Եվ հետեւոմ էր ամբոխն ինձ անձայն,
Ամբոխը հոգու և նանիր խոսքի:

Ինձ բարձրացըին դեպի կախաղան . . .
Եվ ճակտիս՝ ցնորք և վաեմ պատկ,
Ամբոխը սակայն թշվառ և ունայն
Խուռըն սողում էր իմ ոտների տակ . . .

1902 — Ախալցիս



Յորենի ծփուն արտերի եզրին
Կանգնել խորհում եմ սրտիս մեջ լոին . . .

Մի՞թե դու չէիր, չայլենի՞ք իմ հեղ,
Որ թայլաներից, յուրդերից մթին
Հորդացող—եկող ելուղակների
Բյուր սլաք ու նետ, բյուր նիզակ ու տեղ
Սրտիդ մեջ մեխամծ ընկել էիր խեղճ
Քառուղու վրա բաղավող ազգերի,
Դաժան զարերի մզձավանջի մեջ
Ամբակների տակ խոլ նժույգների,
Եվ սրում էին ճիշով չարախինդ
Անդղներն իրենց կտուցները վես

Քո արեակեղ ժայռերի վրա
Հոշոտելու քեզ...
Եվ սակայն հիմա,
Դու նորից ծաղկել, ցնծում ևս նորից,
Ենում է ծուխը խրճիթներից հին,
Ուր մայրըս՝ անուշ օրորել է ինձ,
Իմաստալորել մանուկ իմ հոգին
Քո հզոր լեզվով, երկի՛ր կաթողին:
Այնքան ժամանակ, որ պիտի հերկե
Սեահողըդ հին՝ քո կորիծ որդին,
Եվ գուսանըդ վառ՝ սերըդ պիտ երգե,
Դու պիտի ծաղկես, երկի՛ր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ
Դու պիտի հնչե՛ս, հնչե՛ս հաղթական,
Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտարուխ:

1930



ՀԱՅՐԵՆԻՔԻԱԼ

Պիտի վարդիմ չքնար լանջիու՝
Դարնան վարդով ցնծուն.
Եվ մայրական անհում չնչիու՝
Յորեն արտով ծըփուն:

Կանչում ևս ինձ լուսարարան
Քո սիրաղեղ կոչով՝
Դեմքդ եմ տեսնում՝ նոր ու պահան
Քո հնաղեղ ոճով:

Վա՛ռ ու հզ հզո՞ր քո ապագան
կայծակում է իմ դեմ.
Դո՞ւ, հավերժող իմ Հայաստան,
Անուն քա՞ղցր ու վեճ՛մ:
1935—Փարիզ



ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՆԳ

Ազատության Զա՞նդ, զու վե՛հ զաղանջե՞
կովկասյան վսե՞մ, վե՞ս բարձունքներից,
ինչպես մըրբիկ՝ շաչե՛, շառաչե՛,
Մինչև սիդապանծ ազատն Մասիս:

Անհաղ վըրեմի և լըմբասացման,
Ե՞վ լուսն ցաման բարբառը հնչե՞,
Ժողովուրդների անկա՞խ, ինքնիշխա՞ն՝
Դաշն ազատական խրոխտ զողանջե՞:

Լեռներից խրճիթ, և ձորերից-ձոր,
Եվ սրաերից սիրտ ձայնդ թո՛ղ թոչի,
Եվ ընդվըզումի պատղամդ հզոր
Հավելսյան անլուս երւեք թո՛ղ չհանդչի:

Բմբաստ ողինե՞ր, թեղ առե՞ք, հասե՞ր,
Եվ զանդահարենք ամո՞ւր, մեհամո՞ւս
Զանդն ազատության զանդահարեցե՞ք
Կովկասի համար հանո՞ւր ընդհանո՞ւր:

Եվ որոտա՛, Զա՞նդ, և արթնացըլու
Դարելսը ներհից Մասիսն ու կաղքեկ,
Թափ ասո՞ւր թեղերը, արծիվ լեռներո՞ւ,
Քընած առյօտնե՞ր, բաշերդ թոթիկե՞ք:

Եղ բավական է՝ անարդ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռնելրս շղթա.
Կապահնք փշըելու մեզ թույն ու կրակ,
Մեզ ուժ և կորով, վրեժ որոտա:

Եղ մեզ ամենքիս մոնչա՛, կոչե՛
Մահվան ու փառքի դաշտը պայքարի,
Սրբազն ուզմի հեփորը հնչե՛
Բնողեմ բոնության, ամրարիչա չարի:

Եղ ազատության նորով արևի
Ոսկի ներբողը, Զանդ, դվարթ հնչե՛,
Բյուր գաղաթթներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրության տոնին մեզ կանչե՛:

1903



Նորից եկան գարնան անո՛ւշ օրերը,
Ճուղս առնիմ, ընկնիմ սար ու ձորերը.—
Միրտը կուղե հեռո՛ւները սավառնել,
Նո՛ր ուղիներ, նո՛ր աշխարհներ թափառել:

Մեզ ժայռերի վայրի, խոլոր բարձունքն
Վարդեր քաղեմ ու ճակատը պըսակեմ.
Սարերն ի վեր ամպերի պես բարձրանամ,
Արծըլի հետ այրոված կուրծքը հովին տամ:

Արևն ելավ ոսկի հուսքերն ուսերին,
Զառ հալքերը իրար անո՛ւշ ձեն տովին.
Միրտը զվարթ՝ արտուտի պես թըովուն՝
Դեղի արե, դեղի ճամբար է թըոնում:

Եղնիկները ցողաշաղաղ սարն ելան,
Նրանց հետքից թռչկոտելով սարն երթամ.
Խարույկի շուրջ, հովիվների, հոտի քով,
Սերս երգեմ՝ քաղցըր շովին ծոր տալով:

Որտեղ մըթնի, այնտեղ քնիմ միայնակ,
Վառ աստղերի, կապույտ երկնի ծածկի
տակ.

Ուսիները հովերի հետ միասին
Ինձ գուրդուրող օրոր կասեն՝ որ քնիմ:



Եվ ծեգը ինձ համբուրելով ճայն կըտա,
Կուրծքս լիքը թարմ բուրմունքով կըթնդա,
Ու կարկաչուն աղբյուրների ցողերով
Կըլացվեմ և կը ճախրեմ նոր ճամբով:

Կերթամ հեռո՞ւ անապատներ ու ծովեր,
Կըթափառեմ անհայտ վայրեր, աշխարհներ,
Ուրիշ ազգեր, ուրիշ սրտեր տեսնելու,
Եվ ամենը հասկանալու, երգելու:

Եվ բնության հրաշքները կը տեսնեմ,
Նրա լեզուն, հազար տեսակ կըլսեմ.
Ուրիշ երկինք, ուրիշ աստղեր գրկելու,
Եվ ամենը խորն զդալու, երգելու:

— է՛յ դու, անգին, թափառական, վաեմ
կյանք,
Հեռուների, անհունների իմ տենչանք,
Քո չնորհիլ հրեղեն եմ, թևալոր,
Աշխարհն իմսէ, գլխիս տերն իմ ու հզոր:

Այս նոր տարիաւ առավպատ,
Երբ որ քնից զարթնեցի,
Ավաղ, մերսնք միսս լնկան,
Եղ սուրբ պահեր հիշեցի:—

Տեսա գյուղի տունը մեր...
Ջրաղացի ձայնն անուշ.
Մեր մեծ թռնիրը վառ էր...
Նորահացի հոտն անուշ:

Հայրըս եկել քաղաքից՝
Քույրիկիս ու ինձ համար
Բերել էր թանդ նվերներ—
Նոր զգեստներ ծաղկավառ:

Բոնած հորըս ձեսներից՝
Քույրիկիս ու ես թովառն
Շրջում էինք բերկրալի
Արփաչայի ափերում:

Ա՛խ, այս օրը հիշեցի:—
Հավերժական ախուր պահ:—
Օտար երկիր գնացի,
Է՛լ մայրիկիս չտեսա:

Մայրըս սեղմած ինձ կրծքին՝
Լաց էր լինում որտաքամ,
Համբուրում էր կարստով,
Ռւ չէր թողնում, որ գնամ:

Զիս քայլում էր դվիսահակ
Մտքերիս հետ թախծալից,
Ու տանում էր ինձ հեռու
Մանկության սուրբ վայրերից:

Եվ քայլ առ քայլ՝ մարում էր
Զրաղացիս ձայնն անուշ,
Բայց ես լսում էի դեռ
Խեղճ մայրիկիս լացն անհույս:

Այս նոր տարվա առավոտ,
Երբ որ քնից զարթնեցի,
Ավազ, մերոնք միտս ընկան,
Եվ սրտիս մեջ լացեցի...

1940



Ետ դառնար հիմա հասակըս մատաղ,
Աինեի նորից այն խենթ պատանին,
Երդը՝ շրթունքիս, և սիրտըս ուրախ,
Սահճեի նորից հորըս կապույտ ձին,
Եվ խոլ ձորերով, կատարներով վես,
Սուրող դետերի շառաչյունի հետ
Թուչեի չքնաղ իմ սիրածին տես,
Որպես մի վառված, անվեհեր ասպետ:

ՈՂՋՈՒՅՆ ԱՄԵՆՔԻՆ

Ամսավերջին ապրիլի
Միտքս խոցուն՝ ելա դաշտ,
Բնությունը դրկեց ինձ,
Ինչպես մի մայր սիրաշատ :

Շուրջս փուլել էր հրաշք,
Առավոտն էր բողբոջում,
Նժույգի պես ոսկեբաշ
Արեգակն էր վլոնջում :

Հավքերն ուրախ երդեցին,
Ինձ ժպտացին ծիլ ու սեղ,
Որ իրենց պես սրտադոհ,
Զվարթ լինեմ իրենց պես:

Ի՞նչպես խայտում են, խնդում
Ծփծփում են թևաբախ,
Ռւեր, դառներ լուսագեղմ
Եվ թռչունները չքնաղ :

Եվ ծաղիկներ, թիթեռներ,
Եվ զեփյուններ քաղցրաբույր,
Ծիծեռնակներ սրաթև,
Եվ դայլայլող ակն—աղբյուր :

Ու սրտիս մեջ մեկը ինձ
Խոսք է ասում մտերիմ,—
«Կանդնի՛ր, ո՛վ մարդ, և սիրո՞ք
Ռղջադուրի՛ր ամենքին :»

Գլուխդ բաց, ողջունի՛ր
Եղնիկներին, ծառերին,
Թռչուններին, թփերին,
Առվակներին, գտներին:

Նրանք հավերժ հարազատ
Եղբայրներն են քո խոնարհ,
Ծնած-սնած մի մորից
Քույրիկները քո բարի:

Ծունըր իջի՛ր երկյուղած
Եվ այս մամոստ ժայռը մեծ
Խոնարհ սրտով համբուրիր—
Նա եղբայրն է քո երեց»:
1940



ԲԻՆԳՅՈՒ

Երբ բաց եղան գարնան կանաչ դաները,
Քնար դառան աղբյուրները Բինդյուլի.
Շարվե շարան անցան զուգված ուղտերը,
Յաբս էլ գնաց յայլաները Բինդյուլի:

Անգին յարիս լույս երեսին կարոտ եմ,
Նազուկ մեջքին, ծով-ծամերին կարոտ եմ.
Քաղցր լեղվին, անուշ հոտին կարոտ եմ,
Սև աչքերով էն եղնիկին Բինդյուլի:

Պար-պար՝ ջրեր, պապակ շուրթը չի
բացվի,
Ծուրի-ծուրի ծաղկունք, լացող աչքս չի
բացվի.

՚իեռ չտեսած յարկու, —սկսալս չեւ բացվի,
ինձ ի՞նչ, ավա՛ղ, բլբուլները Բինդյովի:

Մոլորվել եմ, ճամբաներին ծանոթ չեմ.
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ.
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,
Քույրի՛կ, ասա՛, ո՞րն է ճամբան Բինդյովի:
1941—Երևան



Ամառվա կապույտ, անդորր գիշերին,
Ժայռի կատարին նստել եմ մենակ՝
Հայացքըս հառած նիրհ մտած ծովին:

Լո՛ւռ է ամեն ինչ և ամենուրեք.
Ժամանակին՝ անշարժ, և ողջ տիեզերք
Լցված խորազգաց, խորին լոռությամբ:

Պա՛հ երանավետ և նվիրական,
Անհուն լոռություն տիեզերական:

Ե՛ս տեսնում եմ ինձ, Ե՛ս լսում եմ ինձ,
Ե՛ս զգում եմ ինձ, ճանաչում եմ ինձ:
1940—Մեսն



Բոցիկու սարին սև ամպն է չոքել.
Հովն է հեծեծում բասենա դաշտում.—
Խոկի երգերըդ, իմ աղիզ ընկեր,
ին հովն է երգում բասենա դաշտում:

Այս սիրուն արտոււտ լալաղար գարնան
Աբազի դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Դուն թըռչում էիր սիրտըդ վառ-վառման
Գովիքն աղատության երգերով անուշ:

Քաջ ընկերներով կըսիվ սըլացար
Ազատ երգերով Աբազի դաշտում.
Նամարդ թշնամուն զարկիր, զարկվեցար
Ծնկերներիդ հետ Բասենա դաշտում:

Ու ժողովուրդը կարոտ քու սիրուն
Բասենա դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Երգում են անկերջ երգերըդ սիրուն,
Ու չեն մոռանում երգերըդ անուշ...

Ախ, սուրբ վերքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անուշ քնեցիր.
Թող ծանր չթվա այն հողը վըրեդ,
Որն այսպես հըզոր, անհուն սիրեցիր...

Բոցիկու սարին սե ամպն է չոքել,
Հովն է հեծեծում Բասենա դաշտում.
Անուշ երգերըդ, իմ աղիդ ընկեր,—
Ին հովն է երգում Բասենա դաշտում...



Էյ ջան հայրենիք, ինչքան սիրուն ևս,
Սարերըդ կորած երկնի մովի մեջ.
Զքերըդ անուշ, հովերըդ անուշ,
Մենակ բալեքըդ արուն-ծովի մեջ:

Քու հողին մեռնեմ, անդին հայրենիք,
Ախ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ:

Ու հազար կյանքով քու դարդին մեռնեմ,
Բայէքիու մատաղ, մատաղ քու սիրուն.
Մենակ մի կյանքը թող ինձի պահեմ,
Էն էլ քու փառքի գովքը երդելու.

Որ արտուտի պես վեր ու վեր ճախրեմ
Նոր օրվա ծեղիդ աղիզ հայրենիք,
Ու անուշ երդեմ, բարձր ու զիլ գովեմ
Կանաչ արևոտ, աղատ հայրենիք...



ՄԵԾ ԱՏՍԼԻՆԻՆ

Բարձրացրել ես դու պատմության սուրն ահեղ
Երկրի վրա՝ ոճիրներով ծանրաբեռ.
Ստեղծագործ խոսքը հզոր և անշեղ
Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել:

Ելան ծովերն ու ծովերին միացան,
Դու վարեցիր ժողովուրդներ բաղմահեծ
Ազատության, արդարության հանգըլան,
Նոր մարդկության մի նոր աշխարհ լուծընկեց:

Բոնկըլել է արյան հեղեղը կրկին,
Վընջում են նժույդները երկաթի,

Ասկայն սանձը մըրիկների զայրագին
Դու բոնել ես քո կուռ ձեռքում պողսկատի:

{

Եվ տանում ես հաղթանակից հաղթանակ
Հայրենիքը մեր անեղը, աննկուն.
Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կյանք,
Ով մեծ դործի մեծ առաջնորդ խմաստուն:



ՈԱԶՄԱԿՈՉ

Գիշեր է մոայլ, ամպամած գիշեր,
Հողմեր են փչում, շաջում են հողմեր
Դակաճան երկրից մեր նենող թշնամուն
Մեր նոյիրական դաշտերի վրա:
Դու ալիքներն են լեռնանում ընդոստ
Մեր խոռվահույզ ծովերի վրա:

Եյ ազատ Մասիս, երկնասույզ գահեր,
Եյ երկաթակուռ խրոխտ դադաթներ,
Շանթե՞ր եք զոդում, սուլե՞ր եք կոռում,
Հրեղեն ցասում ընդդեմ թշնամուն:
Եյհեյ լսեցեք, վեհ հայրենիքի
Կտրիճ զավակներ, ժողովուրդներ քաջ,
Ելեք, զարթնեցեք, կանգնեցեք արթուն,
Գիտցեք, քնում են գետերն ու քամին,
Սակայն չի քնում երբեք թշնամին:
Ահա ոճրամիտ մեր ոսոխը չար
Շղթա է բերում, լուծ ու կապանքներ՝
Բնկճելու ազատ մեր եղբայրներին
Եվ անարդելու հայրենիքը մեր:

կյայել, լսեցեք, ձայն տվեք իրար,
Ամբողջը եք ոտքի, մարդ քնած չկա՞.
Շուտ հապեք—կապեք զենքեր ու զրահ.
Գոտեպնդվեցեք ատելությամբ վառ.
Գոտեպնդվեցեք անձնազոհ կամքով,
Գոտեպնդվեցեք աշեղ վրեժով,
Շառաչեք ուժգին, կազնիներ հզոր,
Խոլ վրնջացեք, նժույդներ խիզախ,
Մըրիկի նման զարկեցեք շեփոր,
Դեպի ոազմի դաշտ, դեպ հերսացում,
Դեպի ոազմի դաշտ սուրբ դրոշի տակ,
Դեպի բարձունքը մահի ու փառքի,
Վանեցեք հեռու թշնամուն վայրադ,
Մեր խրճիթներից, մեր հնձաններից,
Մեր արտ ու կալից վանեցեք հեռու:
Հավերժ պիտ մնա հայրենիքը մեր,
Հզոր և աղատ և հավերժ կանգուն
Մեր իդեալների սուրբ արեի տակ:

Դեպի ոազմի դաշտ, դեպ հերսացում,
Դեպի բարձունքը մեծ հաղթանակի:



ԶՈՒ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԻ

Հայրենի դաշտում քայլում եմ մենակ.
Աշուն է արդեն, և ձյունը նորեկ
Ծածկել է լանջքը սեդ Արարատի.
Հողմը սաստկաշունչ՝ հսկա մի բարդի
Կորաթեքել է աղեղի նման
Հայկ նահապետի:

Սակայն իմ առաջ կանդնած են ահա՝
Պատմության ահեղ հողմերին ընկճած
Մյուսներն հոյակալ հին ավերակի:
Դուք, դարերի մեջ՝ դժար ու դաժան,
Երբ ամենայն ինչ ընկած էր տապաստ,
Դուք, ո'վ երկնախոհ գմբեթներ ու վեմ,
Մնացիք ըմբռատ, մնացիք անսաստ
Բոհակալների չարության ընդդեմ,
Իմ ժողովուրդը՝ զարկված շղթայի,
Նշանարները սուրբ, քարերը մամոստ
Պաշտեց դուրդուրեց հավատով անշեջ:
Դուք, հզոր որմե՛ր, կամարնե՛ր փրոխար
Նրա հոգու հետ խոսեցիք հոգով
Մեր քաջակորով նախահայրերի,
Եվ ներդաշնակի, և բացարձակի:
Դուք, վեհ վկաներ մեր անմահ փառքի,
Մեր ստեղծագործ ոգու, հանձարի,
Բեկորների մեջ ձեր նվիրական
Ինչպես մանուկը՝ աշխարհից լքված,
Մայրական գրկում տեսավ նա իրեն
Պաշտպանված ամուր, պարիսպներով կուռ:
Հոգով ներշնչված սուրբ քարերիդ մեջ
Իմ ժողովուրդը՝ հիացքով արդար,
Մարմինը տեսավ իր երկնարսաց
Վսեմ խոհերի, վեհ դաղափարի.
Եվ իրեն բարձը զգաց ոսոխից,
Հզարտ ու հզոր, և գոտեպնդվեց
Իր անպարտելի, լուսարազ ոգու
Հավերժի համար անհաշտ պայքարի:

ԺՈՂՈՎՐԴԻՒ ԵՐԳԸ *)

Մյունյաց բարձր լեռներում այդ շանթե՞րն են
բոցկլուսում,

Հանդ ու ձորեր թնդում են որոտալից շաջունով,
Դավիթ-Բեկի քաջերի վառ թրերն են կայծակում,
Ամեն մի սիրո թնդում է նժույգների դոփելունով:

Մեր դարավոր ցասումի, մեր պլեժի օրն արգար
Դավիթ-Բեկը մեղ բերեց ազատության պատղամով.
Մեր գետերը փրփրաբաշ, մեր դաշտերը ծաղկավառ
Աւազմբեցին, ցնծացին մեր թշնամու արյունով:

Դավիթ-Բեկի քաջերի սուրն ու թուրը հըբեղին
Կոտորեցին, չարդեցին մեր թշնամուն չարադեմ.
Դըբոշները թող ծփան, զանդերը թող զողանջին,
Թող քուն մանեն աներկյուղ մեր մանուկներն
այսուհետ:

Դավիթ-Բեկը ծունը իջալ, երբ ոք եկալ Հայաստան,
Ուխտեց ջնջեկ թշնամուն, փրկել աշխարհն Հայաստան,
Ու կատարեց ուխտը սուրբ... Հաղար, հաղար փառք
նրան:

Թող անձնուրաց ուխտ կատեն մեր թուները քաջածին,
Դավիթ-Բեկի թուրը վեհ չըժանդուի հավիտյան,
Շողա, չաչե, երբ խուժե մեր սուրբ հողը թշնամին,
Որ ծուխն անուշ բարձրանա մեր տներից հավիտյան:

*) Գրպած «Դավիթ բեկ» կինոֆիլմի համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ես երգիչ եմ	5
Գիշերն եկավ	5
Սիրալս երկինք է	6
Նրանը իմ կյանքը երադ գարձուցին	6
Հոգի կուտամ, հոգի տուր ինձ	6
Ախ, ալ վարդի, սիրո վարդի	7
Կուղես լինեմ վշտի ցողեր	7
Սիրու իմ սպասիք	8
— Պարզեկա գիշեր	8
Միթե պիտի թումին, թոշնին	9
Լուռ պարտիզում սըրտատրոփ. սիրատենչ	10
Եվ սերդդ սիրտրս կարևեր խոցեց	10
Նման զայլերի խրմբին ամենի	11
Իմ հոգին տարագիր մի թոշուն	11
Քնքուշ հովիկ իմ նազեռուց	12
Մութը զրկած գետ ու գետին	13
Օտար, ամայի՛ ճամբեքի վրա	13
Ծաղիկ էի նորաբողոջ	14
Երաղիս տեսա՝ օրոր ու շորոր	15
Ա՛խ ես սիրու ճամբի տիում	15
Քո ունքերդ իմ սիրեկան	16
Ես հոգիկ լինեի	16
Գրկիր ինձ մեղմիկ	17
Մի մրայոն աղջիկ տեսա	17
Ասում են, թե՝ զու այնպես	18
Վերջին հորձանք իմ ցնորքի	19
Թարթիչներդ շուք կտան	19
Ծաղկավառ ուղին գնում է կրկին	20
Տարիներ հետո քեզ տեսա նորից	20
Քաղած վարդը թըրին ետ շի զա նորից	21
Կուղենայի, երբ կրկին	21

Լուռ գիշերին մաքիս զիմաց	22
Գագաթներին մով սարերի	22
Վարդի շրթունքը	22
Գիշերն երազով	23
Աղբյուրի մեջ մի մարալ	23
Էյ զու, ջանել, հպարտ հասակ	23
Ես կուղեի արեավառ	24
Առավտուն ծով ճանանչում	24
Միշտ զգում եմ ես	24
Եվ արծիվ մի ու իջավ ոըրարշավ	25
Կնոջն ուղեցի հավատալ նորից	25
Դու նըշխուն նուռ զաւը վրադ	25
Քնույր իմ, նազելի	26
Ա՛խ, իմ սիրուս վառ գարունը թոշնեցավ	26
Ամեն գիշեր իմ պարտեզում	26
Երազիս տեսա, որ ծովի ափին	27
Արազի ափին բոստանըս լինի	27
Շափաղ կուտաս բաղի միջին	27
Արտուտն՝ ուսին, վարդը՝ սրտին	28
Ես որ մեռնիմ ու իմ վերքից	28
Այսօր ձեր տուն մեծ խնճույք կա	28
— Եղ ի՞նչ կըրակ կանես, մերիկ	29
Անտուն քամու պես փակ դուռըդ, գիտես	29
Քեզ չտեսնել՝ ուխտել էի	29
Այս ուսուռ տակ մենք երգեցինք	30
Սև աշերեն շատ վախեցիր	30
Լուռ գիշերին հեռու տեղից	30
Իմ այրող վշտից սիրալս է մաշվիլ	31
Դուռըս ափ տուած՝ կը ծեծե քամին	31
Ես որ մեռնիմ ինձ կթաղեք	31
Զգիտեմ, թե ուր	32
Նա մի փոքրիկ աղջիկ է	32
Հայրենի աղբյուր	32
Ո՞րտեղ է լնկած	33
Անզեր, և անհայտ, և անհիշտակ	33
Հայրենի գետի զմբուխտ ափերին	33

Զյուն է զալիս, ու թախծալիր	34
Ռ'ըտեղ պիտի հանգչի մի օր	34
Գրշեր եկավ, աստղերն ելան	34
Ա՛խ, իմ ճամբես մոլոր գընաց	35
Դարդըս լացեք, սարի սլմբուլ	35
Սիրեցի, յարըս տարան	36
— Սիրուն աղջիկ, երկիր լինիմ, դուն ի՞նչ կըլնիս	37
Մանկալ ես, բեզպարած ես	37
Կըսունկները շարան-շարան	38
Մայրիկիս	39
Ե՛յ կանանչ ախպեր	40
Բալես ունի հնդու-մաթա	41
Ա՛խ մեր սիրաը լիքը զարդ, ցավ	41
Ե՛յ դու մահվան անմահ աշխարհ	42
Հովերն տռան սար ու դարձը	43
Ես ջինջ աղբյուրն է՝ ուրախ, կարկաչուն	43
Ծամերդ հյուսել	44
Արհն իջավ սարի զըլիսուն	45
Յարըս հստել վանքի զըռան	46
Ի՞նչ ես զազազում, իմ վիրավոր սիրտ	46
Են ամսի նըման խուլ որոտումով	47
Եղնիկները լուսարացին	48
Աշնան պղտոր, պղտոր ամսեն	48
Ես ճամբեն ոլոր-մոլոր	49
Ժեռ, սե քարը սրտիս վրա	50
Սի մութ ամսեր ճակտիդ դիզվան	51
Ես ի՞նչն է ամպում զիլ թեին կուտա	51
Իրիկունն եկավ, տնե-տուն մտավ	52
Չմեռն անցավ, եկավ դարուն	53
Եեր մանուկ էի	53
Յար, աշերդ արեգական	54
Անհայտ, անորոշ, անձեւ տենչերով	55
Կենսական ծովի հույզերի միջին	55
Գիտեմ, երկիրը շատ դարեր հետո	55
Թափվեցին տերեներն աշնան ծառերից	56
Ծնվ, եկան աղփեր և քո շառաչին	56

Շղարշ ամպերն երկինքն առան	57
Ազգավների գորշ թերով	57
Զմբուխայա երգեր, երազներ շըեղ	58
Երազիս մէջ ծովլ տեսա	59
Կյանիքի կովում ամենքը դեմ ամենքին	59
Եվ անապատից, հեսու ծովերից	60
Հիմա հեռավոր, վեհ Հիմալայան	60
Ո՞ւմ սիրտն է հեծում մըռայլ գիշերին	61
Լեռների լանջում, ծանըր հողի տակ	61
Դու անցորդի պես քեզ միայն ըզգա	62
Անապատում, միրաժի մէջ մի բերվին	62
Չայնըս հնչում է խալարի խորքից	63
Անմահ արկի վառ գդվանքի տակ	64
Անհուն վրեժի և ատելության	65
Ա՛խ երանի չըճնվեի	65
Օրերն հարվում են	65
Ազատության զանգ	66
Եղբայրության կամ թե սիրո	67
Ո՞ւմ հետ եմ անհույս	67
Թռչուններն ուրախ	68
Ո՞չ իշխանություն, ոչ կոխվ, ոչ կին	69
Ծաղկունքը գալնան	69
Աշուն է քամի	69
Առավոտ պահին	70
Գետակի վրա	71
Կը տեսնեմ ահա, — լսու երեկոյին	71
Ամեն զարունքին	72
Կտուկ	73
Մեղեղիներով գարունն է փթթել	74
Հարևանիս որդին մեռավ	74
Ռավեննայում	75
Հայրենիքից հեռու, մի օր	76
Հայրենի ծուխը	77
Երկու մանուկ՝ տղա-աղջիկ	78
Երազիս տեսա, որ մայրս՝ թշվառ	78
Մեր պատմիչները և մեր գուսանները	79
Վերջալույսին ոսկեշող	80

Մանկություն	81
Փրփուր բաշերով ծովը ամենի	82
Կեռասենին ծաղկեց կը կին	82
Վտարված եմ ես	83
Բախտը ինձնից թլուալ զնաց	83
Շատ մի տխրիք, շատ մի խնդար, սիրելիս	84
Լաց, իմ նաղելիս, լաց, դպոն ու անհույս	85
Ծառիս վրա մի գորշ թոչուն	86
Տիեզերական զանդ	88
Ես ձեզ ասում եմ կդա ողու սով	89
Երկինք հիասքանչ, շքեղ լուսալից	90
Հողիս մոռայլ էր մը ըրկի նըման	90
Ցորենի ծփուն արտերի եզրին	91
Հայրենիքիս	92
Ազատության զանդ	93
Նորից եկան զարնան անուշ օրերը	94
Եվ ծեզը ինձ համբուրելով	95
Նոր տարգա առավոտյան	96
Ետ զանար հիմա հասակս մատաղ	97
Ողջույն ամենքին	98
Բինդուլ	99
Ամաւլա կապույտ, անդորր գլշերին	100
Բոցիկու սարին ու ամտն է չոքել	100
Է՞լ, ջան հայրենիք, ինչքան սիրուն ես	101
Մեծ Ստալինին	102
Բազմակոչ	103
Չոն հայ ճարտարապետությանը	104
Ժողովրդի երզը	106

ՈՒՂՂԵԼ ԿԱՐԴԱԼՈՒՅ ԱՌԱՋ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
11	վեր. 7	իմ	մի
16	ներ. 6	խմեհ	խմեի
35	ներ. 2	գլուխս	գլխուս
68	ներ. 5	ծանրացավ	նանրացավ
74	վեր. 6	ծովի	ծավի
77	վեր. 9	կռւղեի նստել այս սուրբ	կապույտ երեկոն այն սուրբ
89	ներ. 6	հարրած հափրած	հափրած
86	ներքեւից 6 և 7	տողերի արանքում պետք է լինի՝ 8	
87	ներքեւից 8 և 9	տողերի արանքում պետք է լինի՝ *	
95	վերեւից 9 և 10	տողերի արանքում եղած առաջն առ վերըդ է	

Պատ. խմբագիր՝ Ռ. ԶԱՐՑԱՆ

Հ. 01890. Պատվիր 226. Տիրաժ 5000. Տպագրական 3,5 մամ.
Ստորագրված է տպագրության 19/V 43 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, 1943





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040982

13n504

